

7. Inauguration

July 2nd to 7th

Deed of incorporation  
of the corporation

July 1912

910.4  
A-95

ՀԱՅՐԱՊԵՏ ՄՈՒՍԱՅԷԼԵԱՆ

ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ԵՒ ՀՈԼԱՆԴԻԱՅՈՒՄ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



910.4  
Մ-95

Վ. Ա. ՂԱՐՇԱՊԱՅ

Իր Ծագրան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1912

2013 JUL 20

910.4


Մ-95

սֆ

ՀԱՅՐԱՊԵՏ ԾՈՒՍԱՅԵԼԵԱՆ

ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ԵՒ ՀՈԼԱՆԴԻԱՅՈՒՄ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Արտատպուած «Արարատ» ամսագրից

Արտատպուած «Արարատ» ամսագրից



Վ. Ա. ՂԱՐՇԱՊԱՏ

Ելեքարաշարժ Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1911 թ.

09 JUL 2013

21796

5 OCT 2011

ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ԵՒ ՀՈԼԼԱՆԴԻԱՅՈՒՄ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԳԱԿԱՆ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն ա խ ա բ ա ն .

Քաղաքակրթութեան առաջացման ու զարգացման մէջ դեր են խաղում բազմապիսի պատճառներ, գործօններ, որոնցից մէկն է և հաղորդակցութիւն-յարաբերութիւնը: Այս գործօնի դերը քաղաքակրթութեան մէջ բաւական նշանակալից է: Եթէ մի ամենաթուցիկ, թեթեւ հայեացք անգամ ձգենք մարդկութեան անցեալի վրայ և հետևենք քաղաքակրթութեան զարգացման ընդհանուր ընթացքին, ամեն քայլափոխում կը տեսնենք, թէ որպիսի նշանակալից, ներգործական դեր է խաղում հաղորդակցութեան-յարաբերութեան գործօնը քաղաքակրթութեան մէջ:

Քաղաքակրթութիւնը սերտ առնչութեան մէջ է հաղորդակցութեան-յարաբերութեան հետ: Որտեղ հաղորդակցութիւն-յարաբերութիւն կայ, այնտեղ էլ քաղաքակրթութիւնը առաջ է գնում, զարգանում. իսկ որտեղ այդ չը կայ կամ շատ սահմանափակ է, այնտեղ էլ քաղաքակրթութիւնը խղճուկ, լճացած վիճակի մէջ է:

Քաղաքակրթութիւնը նոյն իսկ իւր ամենասկզբնական վիճակի մէջ, մի ցեղի, ժողովրդի գործ է, այլ նա առաջանում ու զարգանում է ցեղերի, ազգերի միացած աշխատանքով, փոխազդեցութեամբ՝ միմեանց հետ ունեցած հաղորդակցութեան-յարաբերութեան չորսհիւ: Հէնց ներկայ եւրոպական կոչուած քաղաքակրթութիւնը, որը հետզհետէ ծաւալում է ամբողջ երկրագնդի վրայ, արդիւնք է համայն մարդկութեան միացած աշխատանքի, գործունէութեան: Նրա սկիզբը, հիմքերը, պէտք է որոնել Ասիայում և Աֆրիկայում: Համաշխարհային պատմութեան ընդհանուր ընթացքը, քաղաքակրթութեան ապօրինական զարգացումը այդ է վկայում: Ներկայ կամ եւրոպական քաղաքակրթութիւնը ժառանգութիւն է ասիական, աֆրիկական ժողովուրդների, որը եւրո-



Handwritten signature and date 2097-57

պացիներն աւելի են կատարելագործել, այն էլ ոչ միայն բացառապէս իրենց ոչմերով, այլ աջակից, օգնական ունենալով երկրազնդի այլ և այլ ժողովուրդներէ։ Այդ քաղաքակրթութիւնը իւր սկիզբն առել է Ասիայում և Աֆրիկայում. նրա առաջացման և զարգացման մէջ մեծ մասնակցութիւն ունեն ասորաբաբելոնացիք, եգիպտացիք, չինացիք և հնդկացիք. մանաւանդ առաջին երկու ազգերը։ Ապա չնորհիւ ազգերի միմիանց հետ ունեցած հաղորդակցութեան-յարաբերութեան՝ այդ քաղաքակրթութիւնից սկսել են օգտուել արեւելեան զանազան ազգեր, կատարելագործելով այդ։ Այսպէս՝ պարսիկները օգտուելով ասորա-բաբելոնական և եգիպտական քաղաքակրթութիւնից ստեղծում և կատարելագործում են իրենց սեփական—պարսկական քաղաքակրթութիւնը, որը տարածուել է սկսում մօտիկ Արևելքում։ Շնորհիւ Փիւնիկեցիների միջնորդութեան ասորաբաբելոնական—եգիպտական—պարսկական քաղաքակրթութիւնը կամ արեւելեան կոչուած քաղաքակրթութիւնը աւելի տարածուել է մօտիկ Արևելքում և մասամբ էլ Արևմուտքում—Յունաստանում։ Յոյները մեծ չափով օգտուելով արեւելեան քաղաքակրթութիւնից՝ կատարելագործում են իրենց սեփականը, որը ապա տարածուել է Արևմուտքում և Արևելքում։ Յունական քաղաքակրթութիւնը հիմք է ծառայում Արևմտեան քաղաքակրթութեան, որի վրայ աշխատում են հուլմայեցիք. մանաւանդ այդ տարածելու գործում նրանք մեծ դեր են խաղում։ Յունահուլմայեական կամ արևմտեան քաղաքակրթութիւնը մեծ ազդեցութիւն է ունենում գերմանական ազգերի վրայ. կրթութեով, գաստիարակուելով այդ քաղաքակրթութեամբ, նրանք այդ աւելի են կատարելագործում, որը յայտնի է եւրոպական քաղաքակրթութիւն անունով։ Այնուհետև եւրոպական քաղաքակրթութիւնը սկսում է տարածուել ամբողջ Եւրոպայում և նրանից դուրս։

Այսպէս՝ քաղաքակրթութեան ընդհանուր ընթացքը ցոյց է տալիս, որ ազգերի կեանքում, քաղաքակրթութեան զարգացման մէջ չնորհիւ հաղորդակցութեան յարաբերութեան տեղի ունեցող ընդօրինակումը, փոխառումը, փոխազդեցութիւնը անազխ դեր է խաղում։ Ինարկէ, փոխառման, փոխազդեցութեան չափը բոլոր ազգերի համար միատեսակ չէ։ Կան ազգեր, որոնք ակտիւ գեր են կատարում օգտուելով, փոխ առնելով օտարներից որոշ բաներ, նրանք իրենցն աւելի են կատարելագործում, նորութիւններ ստեղծում և մարդկութեան տալիս։ Բայց կան և ազգեր, որոնք պասիւ դերի մէջ են. նրանք ընդօրինակող են հանդիսանում, ասպարէզ չեն հանում ինքնուրոյն գործունէութիւն, ստեղծագործութիւն։ Առաջին կարգի ազգերը զրա համար կոչուում են ստեղծագործող, իսկ վերջինները՝ ընդօրինակող։

Ստեղծագործող և ընդօրինակող ազգերի մէջ սերտ անջութիւն կայ. նրանք իրար փոխադարձաբար լրացնում են։ Երկուսն էլ նպաստում են քաղաքակրթութեան զարգացման, միայն մէկը անմիջապէս, իսկ միւսը՝ միջապէս։ Այնպէս որ միանգամայն սխալ կը լինի, եթէ պնդեն, որ քաղաքակրթութիւնը բացառապէս ընտրեալ ազգերն են իրենց ուսերի վրայ տանում, միւսները և ոչ մի մասնակցութիւն չունեն։ Բոլոր ազգերն էլ իրենց լուծման են ձգտում, որի արգիւնք է և ընդհանուր քաղաքակրթութիւնը, միայն տարբերութիւնը նրա մէջ է, որ մէկն աւելի շատ լուծման է ձգում, միւսը՝ քիչ։

Այսպէս թէ այնպէս բոլոր ազգերի, ժողովուրդների կեանքում փոխառումները, փոխազդեցութիւնները, ընդօրինակումները խոշոր դեր են խաղում։ Եւ որքան հաղորդակցութիւն-յարաբերութիւնը լայն չափերի է հասած, նոյնչափ և այդ փոխառումները շատ են, մեծ են։ Հաղորդակցութեան-յարաբերութեան զանազան տեսակները կան։ Եւրոպան դէպի յետ ենք գնում, այնքան պակասում են այդ տեսակների թիւը։ Եւ եղել է մի ժամանակ, երբ ազգերը, ժողովուրդները համարեա թէ իրարից անջատ, մեկուսացած կեանք են ունեցել։

Հին ժամանակներում, երբ կեանքը դեռ շատ անդարգացած, քաղաքակրթութիւնը սաղմնային վիճակի մէջ էր, ազգերի մէջ հաղորդակցութիւն-յարաբերութիւնը շատ սահմանափակ, հաղուադէպ էր։ Ազգերն ապրում էին անջատ և նոյն իսկ թշնամաբար էին արամագրուած դէպի իրար։ Օտար և թշնամի համարեա թէ հոմանիշներ էին։ Այդպիսի դրութեան մէջ հաղորդակցութեան-յարաբերութեան միակ միջոց ծառայում էին պատերազմները։ Թէև այս տեսակ հաղորդակցութիւնը-յարաբերութիւնը բացասական էր, մեծ մասամբ վնասներ էր պատճառում, բայց կողմնակի կերպով ունեցել են և իրենց օգուտները։ Ահագին թշուառութիւնների, զրկանքների, զոհողութիւնների հետ միասին, թէև ոչ միշտ, բայց որոշ դէպքերում նրանք պատճառել են և կողմնակի օգուտներ։ Այսպէս կան մի շարք պատերազմներ, որոնք ահագին վնասներ են հետ միասին բարերար հետևանքներ էլ են առաջացրել։ Կան նոյն իսկ պատերազմներ, որոնք թէև կապուած են եղել ահուլի, հրկայական զոհողութիւնների հետ, բայց կուլտուրական նպատակների և ձգտել. կուլտուրական գործ են առաջադրել։ Մակեդոնական պատերազմների հետևանքներից, այն էլ գլխաւոր, մէկն է Արևելքի և Արևմուտքի միացումը, հելլենիզմի տարածումը։ Հոմաթական պատերազմների շնորհիւ գերմանական ազգերը, տեսնում ենք, քաղաքակրթում, կազմակերպում են։ Խաչակրաց արշաւանքները նորից վերականգնում են Արևելքի և Արևմուտքի

խղուած յարաբերութիւնը. Եւրոպայի համար մանաւանդ մեծ նշանակութիւն են ունենում: Փրանսիական յեղափոխութեան պատերազմները Եւրոպական շատ երկրներում խորտակում են հին վիճակը, ֆէօդալական կարգերը: Հէնց միայն Գերմանիայում այդ արշաւանքները վերջ են դնում բազմաթիւ մանրիկ իշխանութիւններին: Նոյնը տեսնում ենք և Ղրիմի պատերազմից յետոյ: Յայտնի է, թէ ինչպէս այդ պատերազմից յետոյ Ռուսաստանում տեղի են ունենում մի շարք բարենորոգութիւններ:

Բայց այս ձևի յարաբերութիւնը ազգերի մէջ մեծ մասամբ բացասական է. պատճառած վեհաները գերակշռում են օգուտներին, յաճախ նոյն իսկ բացառապէս վեհաներ են տալիս: Բանի որ այս ձևի յարաբերութիւնից օգուտներ կողմնակի կերպով են ատացւում, այն էլ շատ սակաւ դէպքերում, պարզ է, որ պատերազմները երկար ժամանակ չեն կարող հաղորդակցութեան-յարաբերութեան միջոց ծառայել և պէտք է տեղի տան այլ օգտակար, նպատակայարմար միջոցներին: Այդպէս էլ լինում է: Առաջ են գալիս հաղորդակցութեան-յարաբերութեան խաղաղ, օգտակար միջոցներ: Դրանցից մէկն է և վաճառականութիւնը կամ առհասարակ անտեսական յարաբերութիւնը ազգերի մէջ:

Վաճառականութիւնը քաղաքակրթական անազին նշանակութիւն ունի: Վաճառականութեան առաջանալով հետզհետէ վերջ է տրւում արիւնոտ, աւերիչ պատերազմներին, վաճառականը ազգերի, ժողովուրդների մէջ հաշտարար միջնորդ է հանդիսանում և միաժամանակ ընդլայնում, ընդարձակում է ազգերի մէջ հաղորդակցութիւնը-յարաբերութիւնը: Ծնորհիւ վաճառականութեան, խաղաղ հաղորդակցութեան-յարաբերութեան ազգերի համար հնարար է գտնում իրարից աւելի մեծ չափով օգտուել, իրար վրայ փոխազդել և այլն:

Ստեղծուելով հաղորդակցութեան-յարաբերութեան խաղաղ, նորմալ պայմաններ, հետզհետէ առաջ են գալիս հաղորդակցութեան-յարաբերութեան բազմաթիւ տեսակները: Դրանցից մէկն է և ճանապարհորդութիւնը, որի վրայ կամենում եմ այստեղ առանձնապէս մատնանշել:

Ընդհանուր հաղորդակցութեան-յարաբերութեան միջոց, բաւական նշանակութիւն ունի նա որոշ մասնակցութիւն, աջակցութիւն է դոյց տալիս ազգերի փոխառումներին, ընդօրինակումներին մէջ: Կան ճանապարհորդութեան զանազան տեսակները, մասնաւոր-անհատական, կազմակերպուած, ընկերական, պաշտօնական, հասարակական և այլն: Արանցից իւրաքանչիւրն էլ ունի զանազան, տարբեր նպատակներ: Բայց բոլորն էլ մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում և

խոշոր ծառայութիւններ են մատուցանում քաղաքակրթական փոխազդեցութեան, ընդօրինակման մէջ: Կան ճանապարհորդութիւններ, որոնք ոչ թէ միայն տեղային, աղգային նշանակութիւն ունեն, այլ և ընդհանուր: Դեռ հնուց ճանապարհորդութիւնը, որպէս հաղորդակցութեան միջոց, շատ դորձածութեան մէջ էր: Բայց ճանապարհորդութիւններ լինում էին գլխաւորապէս դէպի կրթուած, զարգացած կենտրոնները: Ամեն կողմից դէպի կենտրոններն էին դիմում մասնաւոր անհատներ, առեւտրականներ, պետութեան կողմից առաքուած մարդիկ՝ ուսումնասիրելու, ծանօթանալու կրթութեան ազգերի հետ, իսկ սրանց հաղորդածներից օգտուում էին հայրենակիցները: Այս ճանապարհորդութիւնները ազգերի համար շատ խոշոր նշանակութիւն ունէին և մտաւոր, անտեսական և այլ փոխազդեցութեան, ընդօրինակման պատճառ էին դառնում:

Ընդհանուր հաղորդակցութիւն դէպի կենտրոնները, կրթութեան երկրները նոր ժամանակներում աւելի մեծ չափով է տեղի ունենում և առաւել մեծ օգուտներ տալիս: Այս նոյն իսկ մի անհրաժեշտ պահանջ է դառնում ինչպէս ազգերի, նոյնպէս և մասնաւոր, առանձին անհատների համար: Յայտնի է, թէ նախայեղափոխական Փրանսիայի վերաբերմամբ ճանապարհորդութիւնը ինչ գեր է կատարել, ինչ նշանակութիւն են ունեցել Ամերիկայում և մանաւանդ Մեղլիայում ճանապարհորդած, ապրած Փրանսիացիներին հաղորդած տպաւորութիւններն այդ երկրների մասին: Բաւական է միայն մասնանշել Մոնտեսկիոյի, Վօլտերի գրուածքների վրայ (որոնց մէջ նկարագրուած է Անգլիան), որոնք ահագին ազդեցութիւն են ունեցել Փրանսիացիների վրայ: Նոյնը կարող ենք ասել Գերմանիայի, Տաճկաստանի և այլ ազգերի վերաբերմամբ: Ամենուրեք տեսնում ենք, որ ճանապարհորդների նկարագրածը, հաղորդած տպաւորութիւնները շատ բնորոշ են լինում, շարժում, հետաքրքրութիւն են առաջացնում, ազգերին իրար հետ ծանօթացնում, նպաստում փոխազդեցութեան, ընդօրինակման:

Ընդհանուր հաղորդակցութիւնը, ճանապարհորդական տպաւորութիւնները ներկայումս պահանջ են դարձել մանաւանդ յետամնաց, կուլտուրայով ազգատ ազգերի համար, որոնք կարիք են դրում սովորելու, ընդօրինակելու: Առանձնապէս այդ պէտք է այն ազգերին, որոնք դանդաղ առաջ են գնում, ստեղծագործութեան մէջ թուլ են, և սովոր փոխառութեան, ընդօրինակման: Այդ տեսակ ազգերի թուին է պատկանում և Հայոց ազգը:

Հայ ազգը իւր պատմութեան ամբողջ ընթացքում հանդիսացել է որպէս ընդօրինակող: Նրան չեն վիճակուել այնպիսի ստեղծագործութիւններ, որոնք իրաւունք տալին նրան առաջնակարգ ազգերի շարքում գտնուել: Մենք ամեն քայլափոխում տեսնում

ենք, որ հայոց ազգը առանձին կարիք է զգացել հարեան աւելի բարձր ազգերից օգտուելու, փոխ առնելու, ընդօրինակելու: Իւր այդ գերը նա շարունակում է և այժմ: Ներկայումս մանաւանդ նա մեծ կարիք ունի շարժուելու, առաջ գնալու, որի համար նրան պէտք են շատ ծանօթութիւններ, ուսում, փոխառութիւն: Նրա այդ կարիքը կարելի է բաւարարել զանազան միջոցներով, որոնցից մէկն է և ճանապարհորդութիւնը:

Հայը հէնց հնուց յայտնի է իւր թափառականութեամբ, աշխարհատեսութեամբ: Դեռ վաղ ժամանակներից գիտենք, թէ Հայերը ինչ յարաբերութիւններ ունեին Արեւելեան հին ազգերի, ինչպէս և արեւմտեան ազգերի հետ: Իսկ յետագայում հիմնուած գաղութները, գաղթականութիւնները շնորհիւ թափառելի, օտար երկրներում ճանապարհորդելը աւելի է առաջ գնում, աւելի հեռու ազգերի հետ են սկսում յարաբերութեան մէջ մտնել: Այս ճանապարհորդութիւնները, աշխարհատեսութիւնները հայ կեանքում խոշոր գեր են կատարում, բաւարարութիւն են տալիս հայի փոխառութեան, ընդօրինակման կարիքին:

Բայց մի բան զարմանալի է: Չնայած՝ որ ճանապարհորդելը, թափառումները հայերի մէջ սովորական են, բայց շատ քիչ են գրի առնում ճանապարհորդական ապաւորութիւններ, տեղեկութիւններ: Ընդհանրապէս զրականութիւն համարեա թէ չունենք: Իսկ այս զարմանալի լինելու հետ միասին՝ մի խոշոր բաց է և շատ ցաւալի: Գոնէ ներկայումս պէտք է զրա վրայ մեծ ուշադրութիւն դարձնել, աշխատել այդ բացը ծածկել: Ընդհանրապէս զրականութիւն ուսման-կրթութեան-զատաբարակութեան մէջ պատուաւոր տեղ ունի, անգնահատելի ծառայութիւններ է մատուցանում: Նրա արժանիքներից մէկն էլ այն է, որ նա շնորհիւ իւր նիւթի մատչելի է ամենքին, հետաքրքիր և բովանդակալից: Եթէ ճանապարհորդական գրուածքի մէջ մտցրուած լինեն երկրի շատ կողմերի վերաբերեալ ապաւորութիւններ, այն ժամանակ նա կարող է, որպէս՝ ընթերցանութեան նիւթ, շատ խոշոր ծառայութիւններ մատուցանել:

Ներկայումս շատ մեծ է հայերի թիւը, որոնք ապրում, ճանապարհորդում են օտար քաղաքակրթուած երկրներում: Որքան նպաստած կը լինեն իրենց հայրենիքին, եթէ նրանք իրենց հայրենակիցներին հաղորդեն այդ երկրներում տեսածի, կրածի, զգացածի մասին: Սովորական լրագրական թուրքիկ ապաւորութիւնները անցնում են աննկատելի, առանց նպատակին ծառայելու: Յանկալի է զարկ տալ ճանապարհորդական գրականութեան, որը, պիտի ասել, կարող է մեծ յաջողութիւն գտնել: Այս գործը կարող են յանձն առնել մանաւանդ այն հայ ուսանողները, որոնք ուսանում

են արտասահմանում և գրա մէջ ձեռնհաս են: Հէնց միմիայն ապագայ ուսանող սերնդի համար այդ կարող է ուղեցոյց հանդիսանալ, օգտակար լինել: Ներկայումս մեր ուսանողութեան մեծագոյն տոկոսը սովորում է Գերմանիայում, ամենքը ձգտում են այնտեղ գնալ: Բայց ինչու Գերմանիա և ոչ մի ուրիշ տեղ: Նրանք գնում են Գերմանիա ոչ թէ գիտակցելով նրա առաւելութիւնները, այլ միմեանց հետեւելով: Մինչդեռ եթէ շատ երկրների մասին կանոնաւոր տեղեկութիւններ ունենան, կարող են աւելի յաջող ընտրութիւն անել:

Ի նկատի ունենալով այն ամենը, ես գրի եմ առել իմ ճանապարհորդական ապաւորութիւնները: Սրանով տալիս եմ իմ ճանապարհորդական մի շարք թուրքիկ ապաւորութիւնները, որ ստացել եմ Բելգիայում և Հոլանդիայում 1905 թուականի ամառը կատարած ճանապարհորդութեան ընթացքում: Նոյն նպատակով ես մտադիր եմ յետագայում հաղորդել և Գերմանիայում, Շվեյցարիայում և Աւստրիայում ստացած ապաւորութիւններս:

Բելգիայում և Հոլանդիայում ես ճանապարհորդել եմ շատ կարճ ժամանակում (երեք ամիս). այնպէս որ իմ ապաւորութիւնները շատ թուրքիկ են: Բայց կարծում եմ, որ այսքանն էլ կարող է որոշ օգուտներ տալ, մինչև աւելի հիմնաւոր, լրիւ աշխատութիւնների երևան գալը: Բելգիայի և Հոլանդիայի մասին մենք համեմատօրէն շատ քիչ տեղեկութիւններ ունենք, մինչդեռ այդ երկրները խիստ հետաքրքիր են և խրատական, օրինակելի շատ բան են պարունակում իրենց մէջ:

Ամառային սեմեստրը (կիսամեակը) վերջանալու վրայ էր: Իմ հայրենակիցներից, ընկերներից շատերը պատրաստուում էին հայրենիք վերադառնալ կամ օտար երկրներում ճանապարհորդել: Ուսանողների մէջ սովորութիւն է ամառային արձակուրդը ճանապարհորդութեան վերայ գործադրել: Ես էլ որոշել էի այս արձակուրդին ճանապարհորդել: Արդէն երկու տարին լրանում էր, ինչ ես կայացրիցում էի. շարունակ այս քաղաքում գտնուելով ես մի տեսակ ճանձրացել էի և ձգտում էի նոր վայրեր տեսնել թարմ ապաւորութիւններ ստանալ:

Օտարութեան մէջ հայրենիքը կրկնակի թանկագին, սիրելի է: Ես ամենից շատ կարօտել էի հայրենիքիս, մերձաւորներիս, փափագում էի հայրենիքում լինել: Բայց աւագ, այդ առժամանակ իմ համար հնարաւոր չէր: Ես էլ գրա փոխարէն վճռել էի մի այնպիսի երկրում ճանապարհորդել, որը իւր բնութեամբ քիչ թէ շատ հայրենիքս յիշեցնել կարող էր:

Կայացրիք իւր շրջակայքով՝ բնութեամբ այնքան հարուստ չէ: Սաքսոնիայի թագն ու պարծանք կայացրիք իւր մէջ հմուտ կեպով

կենդանացրել է գիտութիւնն ու առևտուրը և գերմանական քաղաքների շարքում շատ պատուաւոր տեղ ունի: Այդ կողմից նա հետաքրքիր նոյն իսկ սիրելի է. բայց բնութեան կողմից բաւական ազգրատ է: Լայպցիգի այդ պահասութիւնը խիստ զգալի է այն օտարների համար, որոնք հարուստ բնութեան զաւակներ են: Առաւել կովկասացիներին համար Լայպցիգի բնութիւնը հրապուրիչ ոչինչ չունի: Եւ, իրաւ, քննչալէս կարող է Լայպցիգը իւր կեղտոտ, փոքրիկ Պլայգէ և Էլստեր գետերովը, ազգրատ շրջակայքով, արհեստական «Scheuerberg» կոչուած բլրով, որի վրայից մեր գիւղացի երեխաները դատկել կարող են, կովկասցու՝ բարձր ու ձիւնապատ լեռների, խոր խոր ձուրերի, արագավազ գետերի, սառն ու քաղցրահամ աղբիւրների զաւակի բնութեան կարօտը յագեցնել, նրա հայրենիքը յիշեցնել:

Այո, Լայպցիգն անկարող էր այդ անել, և ես այդ նրանից դուրս պիտի որոնէի: Պէտք է բնարէլի մի այնպիսի վայր, ուր ճանապարհորդելով կարողանայի թէ բնութեան կարօտս առնել և թէ պահ մի հայրենիքս յիշել: Գերմանիայում այդ տեսակ վայրեր կան ինչպէս են՝ Հարցը, սաքսոնական և բաւարական Եվէյցարիան: Այս տեղերը թէպէտ այն չեն, ինչ որ փառահեղ կովկասն է, բայց որոշ կողմերով այն են յիշեցնում:

Ես զեւ չէի որոշել՝ թէ այդ վայրերից որը պիտի գնամ: Մէկ էլ յանկարծ վրայ հասաւ մի հանգամանք, որը մտադրութիւնս փոխեց: Գերմանական յայտնի թերթերից մէկում (Frankfurter Zeitung) կարդալով Բելգիայի Լիււտտիս քաղաքի համալսարանի ցուցահանդէսի նկարագրութիւնը, որի մէջ բաւական զսփուած էր այդ ցուցահանդէսը. շուտ գրաւուեցի: Ես որոշեցի աստճամանակ զրկուել բնութեան պատճառելիք քաղցր ու թանկագին տպաւորութիւններից և շտապել Լիււտտիս՝ գիտելու և հիանալու մարդկային հանձարի, և աշխատանքի ստեղծագործութիւններով, Լիււտտիսի ցուցահանդէսը զօրեղ կերպով դէպի իրեն էր քաշում. բայց այդ օգտուելով առիթից, ես կարող էի ճանապարհորդել Բելգիայում և Հոլլանդիայում: Այսպէս՝ Գերմանիայում ճանապարհորդելը թողի մի այլ անգամի և պատրաստուեցի Բելգիայում և Հոլլանդիայում ճանապարհորդել: Ինձ յաւ յայտնի էր, որ այս ճանապարհորդութեան ընթացքում բնութեան գեղեցիկ տեսարանների շատ պէտք է հանդիպեմ, մանաւանդ գերմանական մասում: Բայց փոխարէնը ես պէտք է տեսնէի յայտնի պատմական վայրեր, չէն, հարուստ քաղաքներ, մարդկային հանձարի և աշխատանքի աննման ստեղծագործութիւններ:

### Լայպցիգ—Ս.խէն

Օգոստոսի 16 էր, Աւաւօտեան վաղ պէտք է հրածեղտ տայի

Լայպցիգին: Երկու տարի ապրելուց յետոյ թողնում էի այս քաղաքը, բայց հետ տանելով շատ քաղցր յիշողութիւններ: Ծիշտ է, Լայպցիգ մտնելու հէնց առաջին օրուանից նրա արտաքինն այնքան չեմ սիրել, բայց հետզհետէ ծանօթանալով նրա ուսում, գիտութիւն ստանալու համար ստեղծած մեծ, աննման յարմարութիւնների հետ, ես այդ կողմից սկսել եմ նրան սիրել, յարգել: Իմ համար Լայպցիգը անմոռանալի է, ես նրա մէջ ձեռք եմ բերել մի գանձ—գերմաներէն լեզուն և որ գլխաւորն է՝ Լայպցիգը կզել է իմ մտաւոր ծննդավայրը: Հեռանում եմ Լայպցիգից, բայց այն յուսով, որ շուտով պիտի վերադառնամ, նորից վայելելու նրա ուսման, գիտութեան համար ստեղծած յարմարութիւնները:

Աւաւօտեան վաղ Մագդեբուրգեան կայարանում գնացք նստեցի: Լուսամուտից գիտում էի քնից նոր զարթնող Լայպցիգը: Հեռզհեռէ իրար յետեից անհետանում էին բուն քաղաքամասերը, և երևան գալիս արուարձանները: Քիչ յետոյ դրանք ես անհետանում են, և միայն տեղ տեղ նշմարում են գործարարների բարձր ծիսնելոյցները: Քիչ անցած դնացք մնաս բարե է ասում սաքսոնական թագաւորութեան և մանում Պրուսիա: Պրուսական սահմանին շատ մօտ ընկնում է Հալլէ քաղաքը, ուր հասանք կարճ ժամանակից յետոյ:

Հալլէում ես արդէն մի քանի անգամ կզել էի և նորից չիջայ, թէ և այս անգամ էլ հետաքրքրութիւնս շարժում էր: Հալլէն Լայպցիգի մրցակիցն է: Ընկած լինելով նաւարկելի Զալլէ գետի վրայ և երկաթուղային գծերի շատ կապակցութիւններ ունենալով, նա մրցում է Լայպցիգի հետ, թէ և վերջինիս կողմն է իւր կենդանական դիրքը, պատմական անցեալը և ինդուստրիական ու քարածուխային կենդանաներին մօտիկ լինելը (օր. Chemnitz) Հալլէի Լայպցիգի գէմ ունեցած մրցումը արդէն ավացոյց է այն բանի, որ նա հետաքրքիր պիտի լինի: Մանաւանդ յայտնի է նրա համալսարանը, որը Գերմանիային շատ յայտնի մարդիկ է տուել: Արտաքինից Հալլէն բաւական գեղեցիկ է, մանաւանդ, իւր շրջակայքով: Նրան առանձին գեղեցկութիւն է տայի Զալլէ գետը: Իւր գեղեցիկ կանաչազարդ ափերով:

Հալլէից իմ համար սխում է անձանօթ ճանապարհ: Գնացքն անցնում է պատմութեամբ և ինդուստրիայով յայտնի սաքսոնական նահանգով, որը ներկայումս պատկանում է Պրուսիային: Ճանապարհը ամբողջովին անցնում է մի հսկայական տափարակով, որը ծածկուած է արտերով: Տեսարանները միապաղաղ են, որոշ հետաքրքրութիւն է առաջացնում գաշտային աշխատանքը, մանաւանդ օտարների համար:

Գծի կրկու կողմերում էլ ընկնում են հացահատիկների դաշ-

տեր, որտեղ աշխատանքը ետևում է: Այստեղ, ինչպէս ամբողջ Գերմանիայում, աշխատաւորներին մեծագոյն տոկոսը կազմում են կանայք: Պէտք է տեսնել, թէ ինչպէս արևի տակ, աշխատանքին յարմարեցրած տարազը հագին գերմանացի կիներ սրպիսի ջանասիրութեամբ աշխատում է: Մինչդեռ մեր երկրի շատ կողմերում կանայք գլխաւորապէս տնային աշխատանքով են զբաղւում և սակաւ են հանդ դուրս գալիս, այս երկրում, ուր ժամանակը թանկ է և տընտեսական պայքարը խիստ ուժգին, աշխատում են ոչ միայն կանայք, այլ և երեխաները: Եւ այն էլ ոչ միայն գաշտային, այլ ամեն տեսակ աշխատանքի մէջ մասնակցութիւն ունեն:

Դաշտերում թէև տեղ տեղ աչքի են ընկնում հնձելու և կալսելու մեքենաներ, բայց աշխատանքն առաջ է գնում մեծ մասամբ առանց գրանց: Այստեղ մանգաղի փոխարէն գործ են անում երկար գերանդիաձև մի գործիք, որով հասկերը հնձում են, գետին թափում, առանց խուրձեր կապելու: Հնձւորների յետեից եկող կանայք և երեխաները հասկերի կոյտերից խուրձեր են կապում:

Արտերից քիչ հետու իմ աչքին ընկաւ գերմանացի հովիւը: Ծառի հովանու տակ նստած կիսապատառտուած և կեղտոտ մի թուղթ ձեռքին, ըստ երևոյթին լրացիր էր կամ գրքի մաս, կարդում էր. իսկ շունը հսկում էր ոչխարներին և նրանց կարգի բերում: Գերմանական շատ քաղաքներում կարելի է տեսնել կառապաններին, բեռնակիրներին թերթ, գիրք կարդալիս. բայց թէ հովիւն էլ գրել կարգալ գիտէ, ևս դրան չէի հաւատում: Հովուի օրինակը ինձ բերում էր այն եզրակացութեան, որ իբաւ, այս նախանձելի, բախտաւոր երկրում պարտադիր ուսումը սրբութեամբ առաջ է տարւում:

Սաքսոնական նահանգում մեր ճանապարհի վրայ ընկնում է Մագդեբուրգ քաղաքը, ուր հասանք կէսօրին մտա: Կեւ քաղաքը մտած, զինւորական անցորդների բազմութիւնը ցոյց էր տալիս, որ այս քաղաքը զինւորական կետրոնատեղի է: Այստեղ զինւորականները վստում են, և նրանք ամեն փողոցում, անկիւնում կարելի է պատահել: Զինւորականների շատութիւնը բացատրւում է նրանով, որ Մագդեբուրգը Գերմանիայի նշանաւոր բերդերից մէկն է և զինւորական կետրոնատեղի:

Հին եպիսկոպոսանիստ և եպիսկոպոսապատկան քաղաք Մագդեբուրգը ըստ երևոյթին քիչ է փոխուել: Եւ ինչ որ էլ այսօր ունի, այդ պարտական է մեծ մասամբ էլբա գետին, որն այդ քաղաքը միացնում է Դրեզդէն, Բերլին, Համբուրգ և Բրեմեն քաղաքների հետ: Մագդեբուրգը հնումը, մանաւանդ կարլոս Մեծի ժամանակ, յայտնի գիրք ունէր և յարաբերութեան մէջ էր սլաւոնական ազգերի հետ: Սա համարւում էր Հանդայի գաղնակեցը և մեծ

կապեր ունէր կենտրոնների հետ: Մագդեբուրգի ծաղկած վիճակի և պատմական անցեալի մասին վկայում է էլբայի ափում բարձրացող հսկայ աածաբը:

Մագդեբուրգից սկսած ճանապարհը թէև դարձեալ միապագա է, բայց երբևէն հետաքրքիր տեսարաններ են երևան գալիս. ճանապարհը աւելի հեռաքրքիր է գտնում, երբ գնացքը թեքւում է գէպի արևմտեան Գերմանիա և մտնում է Բրաունշվայցի հերցոգութիւնը, որին հետևում է Հաննովերի նահանգը:

Տեսարանները այժմ շատ հետաքրքիր են: Եւ իմ ուշադրութիւնը կենտրոնացրել էի գերմանական գիւղերի վրայ: Աննման են այդ գիւղերը իրենց մաքրութեամբ, երկյարկանի անկրով, ուղիղ փողոցներով ծառուղիներով: Տներից քիչ հետու ընկնում են դաշտերը, ուր մեծ մասամբ գետնախնձոր է ցանած, գերմանացու ամենօրեայ ուտելիքը: Մի բան, որ խիստ աչքի է ընկնում, այդ այգիների պակասութիւնն է: Մինչև այստեղ իմ ճանապարհի վրայ դեռ այգիների չէի պատահել: Ըստ երևոյթին այգիներ քիչ կան այս կողմերում:

Հետաքրքրութեամբ դիտում էի գետնախնձորի մշակումը, երբ ուշադրութիւնս մի այլ բան գրաւեց: Օթնակիս մէջ հարեան երկու պարոն խօսում էին Ռուսաստանի մասին: Թողնելով դուրսը, ևս ականջ դրի նրանց խօսակցութեան: Երկուսն էլ բաւականին կրթուած էին երևում և խօսում էին ուսական գործերի մասին, թէպէտ և այնքան ծանօթ չէին երևում ուսական կեանքին: Ուսակցութեան նիւթն էր ուսական խոսութիւնները: Հաւատարիմ գերմանական օրինապահութեան, կարգադրութեան սկզբունքներին, նրանք խիստ կերպով դատապարտում էին ուս կառավարութեան և թէ ժողովրդին: Ընդհանրապէս շատ բացասական, տխուր կարծիք ունէին Ռուսաստանի, ուս ժողովրդի մասին: Արպիսի անհեթեթ, հրէշաւոր կարծիքներ էին յայտնում: Օրինակ առնելով հրէական, հայկական և մի շարք այլ ջարդեր զանազան քաղաքներում, նրանք պնդում էին, որ Ռուսաստանում ամեն ինչ դեռ հին կերպով է առաջ գնում, այնտեղ ապահովութիւն չկայ, մարդիկ վաճարենի են: Չրկարողանալով համբերել, ևս իբաւումը խնդրեցի վիճարանութեան մասնակցել: Դեռ բերան չէի բաց արել, նրանց անհեթեթ կարծիքները հերքելու, որ ուս ժողովուրդը և հպատակ ազգերն առհասարակ այնպէս վաճարենի չեն, ինչպէս իրենք են կարծում, երբ մէկը իմ առաջ դրաւ հայկական, հրէական և այլ ջարդեր ու նրանց բացատրութիւնը խնդրեց: Այս պարոնը սկսեց նոյնիսկ շատ մանրամասն պատմել Երևանի նահանգում թուրքերի գործած սիրապործութիւնները, որը նրան հաղորդել էր այդ կողմերը ճանապարհորդող և սարսափահար փախած իւր քրոջ օրդին: Նրան

սկսեց լրացնել ընկերը, պատմելով ուսս զիւղացիներէ աշակերտա-  
կան ջարդերի մասին:

Ես թէն աշխատում էի իմ խօսակիցներին բացատրել, որ  
այդ ջարդերը այլ բնոյթ ունին. բայց նրանք իրենց առաջուայ կար-  
ծիքին էին մնում: Տեսնելով որ իմ բացազրութիւնները անզօր են  
համոզելու՝ հոգեկան ծանր վշտով դադարեցրի վիճարանութիւնս.  
Նրանք իրենց ձեռքում ունէին փաստեր, որոնք ինչքան էլ տարբեր  
ազբերներին, պայմաններին էին բղխում, այնուամենայնիւ ձգում  
էին ուսս ժողովրդի անունը, պատիւը: Եւ ուսս ժողովրդի, պետու-  
թեան, հպատակ ազգերի մասին այդպէս դատում էին ոչ միայն իմ  
այս հարեանները, այլ և գերմանացիների մեծամասնութիւնը, մա-  
նաւանդ հասարակ դասը: Կան նոյն իսկ պրոֆեսորներ, որոնք իրենց  
գասախօսութիւնների մէջ ունկնդիրներին հաւատացնում են, որ  
Ռուսաստանը զեռ վայրենի է, այնտեղ ապրելը, չբժկը անապահով  
է: Ինձ պատահել են բնութեան սիրահարներ, որոնք փափագում  
են մեր անման կովկասը տեսնել, ճաշակել նրա քաղցրութիւնները,  
բայց սարսափած թուրքական և այլ վայրենութիւններից, գերագա-  
տում են այդ բաւականութիւնից յաւիտեան զրկուել քան զնազա-  
կի կամ զանազան խայտառակութիւնների զո՛ գառնալ ինչպէս  
այդ վերջերս պատահել էր մի քանի ճանապարհորդների հետ:

Ձրադուած լինելով խօսակցութեամբ, բաւական ճանապարհ  
էինք կտրել և արդէն մտել էինք Բրաունշվայգի հերցոգութիւնը:  
Շուտով հասանք Բրաունշվայգ մայրաքաղաքը: Ես շատ էի ցան-  
կանում հերցոգութեան մայրաքաղաքը տեսնել, որը բաւական ան-  
ուանի է, բայց քիչ օր մնացած լինելով, ևս Բրաունշվայգում  
չիջայ, մտազրուած լինելով փոխարէնը Հաննովեր քաղաքում կանգ  
առնել:

Բրաունշվայգից քիչ հեռացած՝ զնայքը մտնում է Հաննովերի  
երկիրը. Հաննովերը և Բրաունշվայգը մի ժամանակ միացած են Ե-  
զել և կաղմել են մի միութիւն: Բայց այժմ տարբեր բախտ ունեն:  
Բրաունշվայգը պահել է իւր անկախութիւնը, իսկ Հաննովերը կուլ  
է զնայել առաջախաղաց Պրուսիային:

Հաննովերեան երկիրը հնումը Գերմանիայի յայտնի հերցոգու-  
թիւններից մէկն էր: Նապոլէօն I-ը Ենայի մօտ խորտակելով Պրուս-  
սիային, Հաննովերեան երկիրն էլ զրկում է անկախութիւնից և  
միացնում է նոր կազմուած վեստֆալեան թագաւորութեան հետ,  
որի կառավարիչն էր Երեմիա Բօնօպարտը: Քիչ յետոյ Նապոլէօնը  
Հաննովերը բաժանում է Վեստֆալեան թագաւորութիւնից և ուղ-  
ղակի Ֆրանսիայի հետ միացնում: Վեննայի կոնգրեսը վճռում է  
Հաննովերը թագաւորութիւն դարձնել: Սակայն Հաննովերեան թա-  
գաւորութիւնը շատ կարճ է տևում և կուլ է զնում Պրուսիային:

Հաննովերեան երկրի պարծանքը կազմում է նրա համանուն մայ-  
րաքաղաքը: Լինելով թագաւորանիստ քաղաք, թէև կարճ ժամա-  
նակով, և լաւ յարարութիւններ ունենալով Ֆրանսիայի հետ,  
Հաննովերը շատ ճոխ ու զեղեցիկ տեսք է ստանում: Նրա զեղեցիկ,  
փոքրիկ շինութիւնները, փողոցները, խանութները արձանները այդ  
են վկայում: Շատ զեղեցիկ է արքայական պալատը, թատրոնը իւր  
սիրուն ոճով, տիկնիքական դպրոցը, զբօսարաններ և այլն: Եկե-  
ղեցիները այս քաղաքում բաւական շատ են և մեծ մասամբ պատ-  
մական: Շատ զեղեցիկ են Հաննովերի շրջակայքը: Հաննովեր քա-  
ղաքի, ինչպէս և ամբողջ երկրի առանձնայատկութիւններից մէկն  
էլ այն է, որ ժողովուրդը տարբեր արտասանութիւն ունի: Եւ  
այդ բաւական քաղցրահնչիւն է, և ինչպէս ասում են, Հաննովե-  
րեան բարբառը բաւական մաքուր է: (Հաննովերցիք չտ-ի տեղ  
արտասանում են սա):

Հաննովերեան երկրից գնացքը մտնում է Գերմանիայի ամե-  
նա արդիւնաբեր երկրներից մէկը — Վեստֆալիան, որին շուտով հետե-  
ւում է Հաննոսեան երկիրը: Հաննովեր, Վեստֆալիա և Հաննոսեան  
երկիր — այս երեքն էլ Պրուսիայի, ինչպէս և բովանդակ Գերմանիայի  
ամենահարուստ մասն են կազմում. շատ յայտնի են իրենց հանքե-  
րով, ծաղկած արդիւնագործութեամբ ինդուստրիայով: Քարածու-  
խի հարուստ հանքերը ձեռք ձեռքի տուած մետաղների հանքերի  
և Հաննոս գետի հետ այս երկրները դարձրել են ինդուստրիայի  
հսկայական կենտրոններ. ուր աշխատում են միլիոնաւոր բանուոր-  
ներ: Ամբողջ ճանապարհի վրայ, Հաննովերից մինչև Քէօլն տարած-  
ւում են անթիւ, անհամար գործարաններ իրենց բարձր ծխելոյզ-  
ներով և օդը մոայլացնող ծխով:

Գործարանների ցանցը աւելի խտանում է Գորտմունդ քաղա-  
քի մօտերը: Այս քաղաքը համարւում է ինդուստրիական շատ ան-  
ուանի կենդրոն: Անցնելով ամենակարող կապիտալի նուաճած և  
չէն դարձրած այս երկրներով և հիանալով նրա շինարար ոյժի  
վրայ, հասնում ենք Քէօլն քաղաքը, որը Լայպցիգից մինչև այստեղ  
ամենահետաքրքիր կէտերից մէկն է:

Դեռ Քէօլն չբմտած արդէն երևում է Հաննոսը՝ մարդկութեան  
բարիք այդ գետը և առանձնապէս՝ Քէօլնի աստուածը: Գրաւուած  
գետի աղդող տեսքից և հետուից նշմարելով նրա ափից քիչ հեռու  
գտնող մինչև ամպեր բարձրացող մի հսկայական տաճարի զոյգ  
գմբէթները, կայարանում իջնելուն պէս շտապում եմ դէպի այդ  
կողմը: Քիչ յետոյ արդէն Հաննոսի ափին եմ:

Հաննոսը հոտում է Քէօլնի հարաւային մասով: Քաղաքը ընկ-  
նում է գետի ձախ ափին: Միայն երկու կամուրջ է կառուցած, այս  
արդէն ցոյց է տալիս, որքան մեծ է Հաննոսը, և ինչու Քէօլնի մօտ



վերջերքին, թէև ոչ ամբողջովին: Ամբողջ շինութիւնը բռնում է մօտ 6166 քառակուսի մետր ասարածութիւն: Իսկ գմբէթները բարձրութիւնն է մօտ 156 մետր:

Բաւականին գեղեցիկ է և Քեօնի քաղաքային խորհրդարանը: Ընհանրապէս Քեօնը ունի շատ յայտնի շինութիւններ, պատմական յուշարձաններ: Հռոմայեցիներից հիմնուած այս քաղաքը (Colonia Agrippinensis) դեռ մինչև օրս պահել է պատմական շատ յիշատակարաններ: Քեօնին առանձին դիրք և փայլ է տալիս Հակնոս գետը: Դեռ հնումը շնորհիւ այդ գետի Քեօնը քաղաքների մէջ առաջինն էր և Հանզայի հզօր գաշնակիցը: Մի ժամանակ Քեօնը առևտրական մեծ յարաբերութիւն ունէր զանազան կենդրոնների հետ, մանաւանդ Սնդիկայի: Հէնց նրա այդ փառահեղ տաճարը իւր ծաղկեալ ժամանակից է, որը և վկայում է՝ թէ որքան հարուստ, ճոխ է եղել այդ քաղաքը: Բայց Ամերիկայի գիւտից յետոյ, սվիսանոսային հազրդակցութեան սկսուելով, նա կորցնում է իւր նշանակութիւնը: Այսօր նա ամենից շատ յայտնի է իւր «Քեօնեան ջրի» արտահանութեամբ: (Eau de Cologne):

Շրջելով Քեօնի փողոցներով, որոնք բաւականին տարօրինակ են, այնելով եպիսկոպոսապատկան այս քաղաքի պատմական շինութիւնների առջևից, մարդ պահ մի զգում է, թէ անցեալումն է ապրում: Ինձ վրայ գոնէ խիստ ազդում է իմ մէջ անշափ յոյզեր էր առաջանում Հակնոսը: Կանգնած պատմական այդ գետի ափին յուշերով տարուել էի պատմութեան մութ, խաւար գարերը: Առաջևս պատկերանում էր Կեսարի, Տակիտոսի և այլոց նկարագրած Գերմանիան: Երևակայում էի հին գերմանացիներին մորթիներ հագած, քարէ կամ փայտէ զէնքերով Հակնոսի և Էլբայի ափերին թափառելիս: Ես յեշում էի վայրենի թափառական գերմանացիներին և համեմատում նոր երիտասարդ գերմանացիների հետ: Համեմատում էի և նախանձում: Նախանձում էի գերմանացիներին, առաջևս պատկերացնելով իմ հայրենիքի ախուր վիճակը:

Մի ժողովուրդ, որ աւելի առաջ էր կուլտուրայով քան գերմանացին, մի ժողովուրդ, որը մի ժամանակ ունէր իւր ծաղկեալ վիճակը, մինչդեռ գերմանացին թափառական, վայրենի կեանք էր վարում, այսօր որքան հեռու, յետ է մնացել գերմանացուց:

Յիշելով մեր ժողովրդի գարերի ընթացքում կրած անօրինակ ճախորդութիւնները, ևս դայրոյթով լցւում էի զէպի իմ նախնիքը: որոնք այնքան անխոնձ էին գտնուել, իրենց համար այս տեսակ մի երկիր հայրենիք ընտրելով: Ի՞նչու, ի՞նչու, նրանք էլ չնչխառնցին Եւրոպայում մի կտոր հող ձեռք բերել, որ մենք էլ՝ ազատ բարբարոսներից, անվերջ աւերումներից, թալանից, մարդկութեան ցոյց տայինք, որ ազգ ենք և նախանձախնդիր մարդկութեան յառա-

ջադիմութեան, այն էլ մեծ չափով:

Մոնղոլական ծագման պատկանող հունգարացին, Փիննը մեր օրերում աշխարհի հրացման առարկայ են իրենց յաջողութիւններով յաւաջադիմութեամբ, իսկ մենք, որ մարդկութեան աւելի աղնիւարիւնից ենք սերուած, Եւրոպայից դուրս ընտրած լինելով մեզ համար հայրենիք, մինչև օրս էլ կրում ենք մեր հարևանների պատճառած տանջանքների ծանր խաչը.....

Այս տեսակ մտածմունքների մէջ խորասուզուած, ես վերջին հրածեշտ ևմ տալիս Քեօնին և ճանապարհս շարունակում: Քեօնի շրջանից դուրս գալով, բնութիւնն աստիճանաբար փոխուում է և աւելի գրաւիչ է դառնում: Հետզհետէ երևում են անտառներ, ձորեր, փոքրիկ բարձրութիւններ: Մօտենալով Ախէն քաղաքին, բնութիւնը աւելի գեղեցիկ՝ գրաւիչ է:

Ախէնում մարդ իրեն զգում է, որ արդէն չուրջն այլ բնութիւն է տարածուում: Եւ այդ առաջուանի համեմատութեամբ շատ գրաւիչ, հրապուրիչ է: Շատ սիրուն է Ախէն քաղաքի դիրքը: Թէպէտ նա գերմանական քաղաքներից շատ յետ է մնացել իւր առևտրով, շինութիւններով, կեանքով ընդհանրապէս, բայց բնութեամբ խիստ գեղեցիկ, գրաւիչ է:

Ախէնը մի ժամանակ յայտնի փառք է ունեցել: Նա եղել է Փրանկոնեան թագաւորների մայրաքաղաքը: Առանձնապէս Կարլոս Մեծը շատ էր սիրում այս քաղաքը, այժմ էլ նրա դին ամփոփուած է քաղաքիս մայր տաճարում:

Ախէնում մարդ զգում է, որ դուրս է գալիս Գերմանիայից: Փողոցները, խանութների զատաւորութիւնը, կարգ ու կանոնը, աների պատուհանների զարդարանքները, մարդկանց վարուելու կզանակը, լեզուն, այս բոլորը ցոյց են տալիս, որ այստեղ այլ կեանք է տիրում, և որը խիստ տարբերում է բուն գերմանականից: Այստեղ տիրում է կաթոլիկ աշխարհը: Այդ վկայում են փողոցներով անցնող սեազգեստ կաթոլիկ հոգևորականները, իրենց անձօնի գլխարկներով և ամիլած գէմբով: Այս քաղաքում ամեն փողոցի ծայրին կամ տան ճակատին կարելի է տեսնել մետաղից կամ փայտից պատրաստուած Բրիտոսի խաչելութիւնը կամ մայր Աստուածածինը պատերից կախած: Ես կաթոլիկ աշխարհում չեմ եղել և Քեօնից յետոյ Ախէնը երկրորդ կաթոլիկ քաղաքն է: Բայց վերջինս աւելի բնորոշ է: Բաւական հետաքրքրուած կաթոլիկներով, ևս շտապում ևմ եկեղեցիներից մէկը: Դեռ եկեղեցի չը հասած՝ առջևս անցնում էր մի թափօր: Հետաքրքրուելով, ևս սկսեցի հետեւի:

Կատարում էր մի կրօնական թէ ազգային թափօր: Ամենից առաջ գնում էին երածիչտները՝ զանազան գործիքների վրա





ազդել, որ նա իւր զարաբազցի հայրենակիցներին լաւ է ճանաչում, նրանք «նամարդ» չեն և հաշտ կրճման հայերի հետ: Ես՝ չը կամենալով խօսակցիս վիշտ պատճառել, համաձայնութեան նշան տալի, թէպէտ հաւատացած էի, որ Ղարաբաղում էլ մօտ ապագայում ընդհարումներն անխուսափելի են: Խօսակցիս լեզուն բացուել էր. նա սկսեց պատմել իւր կեանքի մասին, ինչպէս նա շատ երկրներում եղել է, շատ ազգերի է ծանօթ, բայց նրան ամենից շատ սիրելին կովկասն է և ուրա ժողովուրդը: Ռուս ժողովրդի վրայ մանաւանդ նա հիացած է. նա ոչ մի տեղ, ասում է չի պատահել այնպիսի սպարզութեան, բարեհոգութեան, սրպիսին ուրա ժողովուրդն ունի: Խօսակցի թուրքս բոլորովին անդրադէտ էր. անձոնի կերպով խօսում էր ֆրանսերէն, բայց շատ տեղեկութիւններ ունէր: Նա սիրով յանձն առաւ ինձ ուղեկցել և սարաւ պարսկական և տաճկական բաժինները ցոյց ապու: Այդ երկու բաժիններում ի ցոյց էին հանուած մեծ մասամբ գորգեր և մետաքսեայ գործուածքներ: Բաժինները իրարից շատ մօտ էին, բայց ծառայողները, ըստ երևոյթին, իրար հետ հաշտ չէին և միմեանց դէմ վատ էին արամագրուած: Իմ թուրքը նոյնպէս չէր սիրում տաճիկ ծառայողներին:

Թողնելով ցուցահանդիսի գլխաւոր բաժինը, ուր դեռ շատ երկրների ցուցադրած իրերը չէի տեսել, ես անցայ մեքենաների, շոգեշարժների, զէնքերի բաժինը: Այստեղ թաղաւորում է ժամանակակից արդիւնագործութիւնը իւր ամենանոր յաղթութիւններով, գիւտերով, կատարելութեան հասցրած սակզագործութիւններով: Մեծ տեղ են բնում բելգիական, ֆրանսիական, գերմանական և անգլիական արտագրութիւնները: Չէնքերի բաժնում իւր պատուաւոր տեղն ունի Լիւտտիխ քաղաքը: Բաւական հետաքրքիր է և յայտնի գերմանացի արդիւնագործ կրուպին յատկացրած առանձին բաժինը:

Մասնագէտ չլինելով և քիչ բան հասկանալով, ես թողնեցի այդ հսկայական շինութիւնը և անցայ երկրորդական բաժիններին: Գլխաւոր բաժիններից քիչ հետու գտնուում են առանձին տէրութիւնների իրանց համար կառուցած շինութիւններն, ուր ի ցոյց են դրուած այդ տէրութեան զանազան արդիւնագործութիւնները: Առանձին հետաքրքրութիւն են շարժում բալկանեան տէրութիւնների շինութիւնները, իրանց ոճով և ի ցոյց հանած իրերով: Շատ հետաքրքիր էին բուլղարական և սերբիական շինութիւններն իրանց ազգային ոճով և միջի տարօրինակ իրերով: Հետաքրքիր էր նոյնպէս ֆրանսիական գաղութների շինութիւնը իւր ի ցոյց հանած իրերով:

Նստելով փոքրիկ շոգեկառքը, որը պտտում է ցուցահանդիսի

չորս կողմը և ամեն շինութեան առաջ կանգ է առնում, ես կարողացայ համարեա թէ ամեն ինչ աչքի անցկացնել և մի ընդհանուր գաղափար կազմել ցուցահանդիսի մասին: Ընդհանրապէս կարելի է ասել, որ Լիւտտիխի ցուցահանդէսն ամենայնջողներից մէկն է. ամենամեծ մասնակցութիւնը ցոյց են տուել Բելգիան և Ֆրանսիան:

Ցուցահանդիսից դուրս գալով. գնացի քաղաքը պտտելու:

Վալլօնների մայրաքաղաքը-Լիւտտիխը, պէտք է ասել, բաւական զեղեցիկ է: Այդ զեղեցիկութիւնը նրան պարգեւել են զեղեցիկ Մասս գետը և ծառաշատ բարձրութիւնները: Ազքառ չէ Լիւտտիխը և զեղեցիկ շինութիւններով: Շատ յայտնի են և անսնկու արժանի նրա «St. Jaque եկեղեցին (շինուած XI դարում), արդարագատութեան (Palais de Justice), բերդը (Citadelle) իւր զեղեցիկ տեսարանով և համալսարանը, որը 200900-ից աւելի զբեր ունի:

Երեկոյեան դէմ վերջին անգամ դիտելով այս գործարանաշատ քաղաքը, ճանապարհ ընկայ դէպի Բրիւսսէլ՝ Բելգիայի սիրտը: Լիւտտիխից դէպի Բրիւսսէլ բնութիւնը կորցնում է իւր այն գրաւչութիւնը, որ ունէր Ախէնից մինչև Լիւտտիխ: Գեղեցիկ տեսարանները, բարձրութիւնները այլ ես դէպի Բրիւսսէլ չեն շարունակուում, այլ թեքում են դէպի Նամիւր քաղաքը, որը հնումն անուանի բերդ էր: Լանդէն քաղաքից քիչ հետու, ճանապարհի վրայ ընկնում են հայահատիկների հսկայական դաշտեր, որոնք յայտնի են Բրաբանդ նահանգում: Դրանցից քիչ հետու էլ գտնուում է պատերազմական Նէէր Վենդի կոչուած դաշար: Անցնելով պատմական և համալսարանական Լուվէն փոքրիկ քաղաքով, քիչ ժամանակից յետոյ հասայ Բրիւսսէլ:

Բրիւսսէլը գտնուում է համարեա թէ Բելգիայի կենտրոնում: Շնորհիւ իւր այդ դիրքի՝ ամեն ժամանակ նրա շուրջն է պտտել Բելգիայի պատմութիւնը: Բրիւսսէլը միշտ բելգիական ժողովրդի քաղաքական և թէ մտաւոր կեանքի կենտրոնավայրն է հանդիսացել և իւր այդ դիրքը մինչև օրս էլ պահել է: Բելգիայի մայրաքաղաքում միայն կարելի է Բելգիայի մասին որոշ, լրիւ գաղափար կազմել: Այստեղ ամեն քայլափոխում մեր առաջն է ներկայանում ազատ, անկախ Բելգիան իւր կարճ ժամանակում ձեռք բերած յառաջադիմութիւններով: Այստեղ մարդ հանդիպում է այնպիսի սքանչելի գործերի, որ մի տեսակ ափսոսում է, թէ ինչու այս ժողովուրդը մի քանի դար առաջ չէ անկախութիւն ձեռք բերել, որ աւելի մեծ չափերով ծաղկեցնէր, զբախա գարծնէր օտարներից աւերակ, անպաղարեր գարծած իւր հայրենիքը:

Ընդամէնը 15 տարի է, ինչ բելգիական ժողովուրդը սկսեա-



բանիք, փոստատունը, արքայական պալատը, յայտնի աղմուկեմածի միջանդրը և այլն:

Անկասկած Բրիւսէլի թագն ու պարծանքը, նրա հրաշա-  
լիքը կազմում է արգարագատուեթեան պալատը (Palais de Justice),  
որն իւր տեսակում եզակի է: Մի գործ, որն արդէն յիշում է  
որպէս աշխարհի ամենամեծ, հրաշալի շինութիւններից մէկը: Այս  
հսկայ շինութեան ճարտարագետը մի կողմ թողնելով ճարտարա-  
պետական յայտնի ոճերը, ձգտել է մի խառնուրդ ոճ ստեղծել, և  
այդ նրան յաջողուել է: Ասորաբարեւական, եզիպտական և այլ  
ոճերի նմանողութեամբ նա ստեղծել է մի խառնուրդ ոճերի, որը  
բաւական գեղեցիկ է: Այս շինութեան հիմքը դրուել է 1856  
թուականին և աւարտուել է 1883-ին: Ամբողջ շինութիւնը 180  
մետր երկարութիւն և 170 մետր լայնութիւն ունի: Իւր մէջ պա-  
րունակում է 27 մեծ դահլիճ, 245 սենեակ և 8 բակ: Վերնումն  
ունի մի աշտարակ, որն բարձրութիւնը հասնում է 122 մետրի:  
Ինչ վերաբերում է ներսին, բաւական ճոխ կերպով զարդարուած  
է: Այս շինութիւնը գտնուելով քաղաքի հարաւային մասում  
բարձր դիրք ունենալով, առջիւ պարզում է ամբողջ Բրիւսէլը:  
Այդ տեղից դիտողը բաւական հաճոյք է ստանում: Չնայած ինչ-  
քան այս շինութիւնը հրաշալի է, հիացմունք, հաճոյք է առա-  
ջացնում, զարմանալիօրէն բելգիական կառավարութեան կողմից  
անուշադրութեան է մատնուած: Ապրած լինելով Գերմանիայում,  
ընտելացած այնտեղի քաղաքների մաքրութեան, կարգ ու կանո-  
նին, ինձ այստեղ օտարութիւն էր թուում այն, թէ ինչու այսպիսի մի  
գեղեցիկ շինութիւն անհնամ է թողնուած, ինչու չեն արգելում  
Ֆլաման երկրաներին սրա շուրջը խաղալն և կեղտոտելը: Հսկո-  
ղութեան, խնամքի բացակայութիւնը խիստ զգայի է: Եթէ այս  
շինութիւնը գերմանական ամենայեւային մի քաղաքում լինէր, սրան  
կը լիզէին, աչքի լոյսի պէս կը պահէին: Բայց Բելգիայում ան-  
փութութիւնը մեծ չափով աչքի է ընկնում:

Աղքատ չէ Բրիւսէլն և թանգարաններով: Թէպէտ եղած  
բոլոր թանգարանները մեծ մասամբ նոր են, բայց և այնպէս բա-  
ւական թանկագին իրեր են պարունակում: Մեծ հետաքրքրութիւն  
են չարժուած հետեւեալները. «Musée ancien» և «Musée modernes», ուր  
գտնուում են Ֆլամանդական, հոլանդական, լատինական (իտալա-  
կան, սպանիական և ֆրանսական) գաղտնիներին պատկանող նկար-  
ներ և այլ և այլ արձաններ, գործեր, զանազան գեղարուեստական  
իրեր: Երկրորդն իւր մէջ պարունակում է բոլորովին նոր երկեր  
(նկարչական): Այստեղ կան ընդամենը 339 նկար, բայց գրանցից  
հազիւ մի քանի տասնեակը յաջող են, մնացածներն այնքան էլ  
արժէքաւոր չեն: Յաջող են և որոշ ներքութիւն ու գեղեցիկութիւն են

պարունակում հետեւեալ նկարները. De Brackeleer-ի «պտուղներ  
բաժանելը գալոցում», Gallait-ի «Պետը Տուրնէ քաղաքում»,  
Cluysenaur-ի «Կանուսայում» նկարները:

Բրիւսէլին ստանձին գեղեցիկութիւն են ապիս և նրա շր-  
ջակայքը, կրթավայրերը: Մանուանդ դրասավայրերի կողմից այս  
քաղաքը շատ բազաւոր է և կարող է շատ ու շատ քաղաքների  
նախանձը շարժել: Յայտնի է «պարկ» կոչուած դրասատեղին, որը  
գտնուում է քաղաքի կենտրոնում և զարդարուած է արձաններով,  
յետոյ «Bois de la Gambre» անտառակը, շատ խնամքով ու առան-  
ձին հմտութեամբ կառուցուած: Այս անտառակն լւր մէջ պարու-  
նակում է ժայռեր, փոքրիկ լճեր, բնական աղբիւրներ և էլ ուրիշ  
շատ գեղեցիկութիւններ: Բայց առանձնապէս ինձ զիր էր գալիս  
«Յիսնամեայ յօբելիանի պարկն», որը կառուցուած է 17 դարի  
ֆրանսական սճով: Որքան գեղեցիկութիւն, նրբութիւն ունի այս  
գրասատեղին: Արձանները, հսկայական երկու սիւները, փոքրիկ  
չափաւորները, ծառաղիները, հին սճով կառուցած երկու թան-  
գարանները, սրանք իրար հետ միացած են երկը կամար բնեցող  
մի շինութեամբ, այս բոլորը գրասատեղուն վայլ, գեղեցիկութիւն  
են ապիս: Պետը է խօստովանել, որ հսկայական միւս տեղերում  
անսածիս, այստեղ մաքրութիւն, խնամք, կարգ ու կանոն էր աի-  
նում: Մանուանդ մի առանձին գրաստութեամբ գեղի իրան է  
ձգում երկը կամարեայ շինութիւնը, որն երկու թանգարանները  
միացնում է իրար հետ կամարների արանքից հետուած երկում  
է կանաչ, մութ անտառ: Եւ կարծէք այդ բոլորը նկարի վրայ է,  
ու թէ իրականութեան մէջ: Այստեղ գտնուում է և մի շինութիւն,  
որ նման է մաճուկական մզկիթի: Ծարարագետութեամբ, սճով  
մինարեկցով, կիսալուսնով միանգամայն մաճուկական մզկիթն է  
միջնադարում: Եւ սկզբում մեծ եղաւ իմ զարմանքը՝ թէ մզկիթն այս-  
տեղում ինչ գործ ունի: Բայց յետոյ երեւոյ: որ այլ նպատակի է  
ձառայում: Մզկիթն շինութիւնը ծառայում է որպէս պանօրա-  
մասայում: Մզկիթն շինութիւնը կայրէի, Երկաթի ափերի և բո-  
վա և մէջը պարունակում է կայրէի, Երկաթի ափերի և բո-  
վա՝ դակ Եզիպտոսի կենքից, բնութիւնից վերցրած նկարներ:

Բրիւսէլից մօտիկ գտնուում է Վաթերլոօ-ի (Belle — Alliance)  
հաշակաւոր պատերազմական դաշտը: Բրիւսէլի հարաւային կա-  
յարանից դնացքը տանում է մինչև «Braine l'Alleud» կոչուած  
կայարանը, որտեղից հանրակառքերով գնում են Վաթերլոօ ի դաշ-  
տը: Դաշտը կայարանից շատ մօտ լինելով, կարելի է և ոտով գնալ:  
Կայարանից քիչ հեռացած՝ արդէն երևում է բաւական բարձր մի  
կայարանից քիչ հեռացած՝ արդէն երևում է բաւական բարձր մի  
բլրակ, վերնում առիւծի մի արձան: Որքան մօտենում էք բլրա-  
կին, նոյնքան նա աւելի է մեծանում, և քիչ անցած ամբողջովին



բութեամբ շարունել Բաւական է տեսնել «Norddeutsche Lloyd», «Red Star Line» նաւային ընկերութիւնների հսկայ նաւերը, որոնք ափում խարխախ են ձգած, և զգալ թէ ինչու՞մն է Անտվերպէնի ոյժը, կեանքը:

Ափում կանգնած սփիւաննոսային նաւերը իրանց վիթխարի մեծութեամբ ապշեցնում են: Մանաւանդ մեծ հետաքրքրութիւն են շարժում նաւեր բեռնելու և պարպելու գործողութիւնները, որ տեղի են ունենում հիդրաուլական կառններով: Ափի ամբողջ երկարութեամբ անցնում է երկաթուղու գիծ:

Անտվերպէնի ամբողջ կեանքը նաւահանգստումն է: Այստեղ կարելի է դիտել նաւադնայութեան և առեւտրի հսկայական յառաջադիմութիւնները:

Այստեղ է արգիւնագործութեամբ զարգացած աշխարհը իւր կատարելագործութիւններով, մանաւանդ գաղութային առեւտրով: Ափին շատ մօտ գտնուում են Անտվերպէնի յայտնի շինութիւնները: Իրանց մէջ առաջին տեղը բռնում է Անտվերպէնի հրաշահաւոր մայր եկեղեցին: Այս շինութիւնը յայտնի է ոչ միայն իւր ճարտարապետութեամբ, այլև մէջը պարունակում է մի աննման գանձ: Այստեղ է գտնուում Ռուբէնի «Մաշկի վայր բերելը» կոչւող յայտնի նկարը: Առանձին փափագ ունէի տեսնելու Մեծ վարպետի գոված գործը, բայց իմ շար քախտից տեսնելու ժամանակն անցած էր. նա արդէն ծածկուած էր վարպետով, և ինձ մի՞ճակուած էր միայն պատձէնով բաւականանալ: Փոխարէնը սխեցի եկեղեցին դիտել, որի պատերից կախուած էին Ռուբէնի այլ նկարները, որոնք սակայն շատ յետ էին նրա գլուխ գործոցից: Որքան եկեղեցին ներքուստ զեզեցիկ է, նոյնքան և արտաքուստ սղեղ է: Գեղեցիկ է միայն առջևի մասը. Հետաքրքիր է և զբոսայիթը: Այս զբոսայիթը, կամ աւելի ձիւտ աշտարակը, ունի 622 աստիճան, և ամենավերջին ծայրից պարզ եղանակին կարելի է դիտել Բելգիայի Բրաբանդ և Ֆլանդրիա նահանգներն ամբողջովին: Աշտարակն ունի 40 զանգակ: Եկեղեցին գտնուելով քաղաքային ինքնավարութեան իրաւասութեան տակ, զանգերը աօն օրերին պարի եղանակներ են նուազում:

Եկեղեցուն շատ մօտ գտնուում է քաղաքային խորհրդարանը, որը պատմական շինութիւն է, իւր սկիզբն աւնում է 1565 թուականից և կառուցուած է վերածնութեան ոճով: Ընդարձակութեամբ թիւեր խիստ ինքնուրոյն է: Ներսում գտնուում են բաւական յայտնի նկարներ և պատմական հնութիւններ: Խորհրդարանից քիչ հեռու գտնուում է «Plantin—Moretus աշխարհահռչակ թանգարանը» որը առաջ պատկանել է յայտնի տպարանատէր Christoph Plantin-ին (1514—1589):

Այս թանգարանը յայտնի է ոչ թէ միայն իւր նկարներով (կան և Ռուբէնի նկարներէց), այլ և արձաններով, բիւստերով, և որ գլխաւորն է, Plantin-ի լոյս ընծայած գրքերով և տպարանական գործիքներով:

Անտվերպէնը յայտնի է շատ շինութիւններով, մանաւանդ եկեղեցիներով: Բացի մայր եկեղեցուց, ճարտարապետական մեծ արժէք ունեն և «Saint-Jacques», «Jesuiten» և «Augustus» եկեղեցիները:

Բայց Անտվերպէնի, ինչպէս և ամբողջ Բելգիայի գլխաւոր փառքն է այս տեղի նկարչական թանգարանը: Դեռ ներս չը մտած, շինութիւնը շատ բան է ասում: Այս ընդարձակ շինութեան մէջ գտնուում են Ռուբէնի ժողովածուն, զեղարուեստական թանգարժէք իրեր, արձաններ, նկարների մեծ ժողովածու, որը հաւաքուած է մեծ մասամբ եկեղեցիներից, վանքերից և այլ տեղերից: Նկարների ժողովածուն թէ իւր քանակով և թէ որակով մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում: Ամբողջ Բելգիայի, կարելի է ասել, նոյն իսկ Նիդերլանդիայի նկարչութիւնն այստեղ է: Այստեղ կարելի է գտնել բելգիական ծագում ունեցող բոլոր հին և նոր նկարիչների գործերը: Չափից դուրս աննման են մարդկանց նկարները: Դեռ մի կողմ թողած բնութեան, կենդանիների և առօրեայ կեանքից վերցրուած պատկերները: Այս թանգարանում իրանց պատուաւոր տեղն ունին Ռեմբրանտ, Ռուբէնս, Վան-դիկ և ուրիշները:

Անտվերպէնը բելգիական վերջին մեծ քաղաքն է դէպի Հոլանդիա տանող ծանապարհի վրայ: Այս քաղաքում արդէն նշմարուում է հոլանդական կեանք: Որքան Լիւտտիխն ու Բրիւսէլը ներկայանում են որպէս վալլոնական քաղաքներ, և ուր ամբողջովին տիրում է ֆրանսերէն լեզուն ու ֆրանսիական կեանքը, Անտվերպէնն ամբողջովին ֆլամանդական քաղաք է, այս տեղ իշխում են ֆլամանդական և հոլանդական լեզուները, թէև պաշտօնական լեզուն դարձեալ ֆրանսերէնն է:

Անտվերպէնի կեանքը, տները, մարդկանց վարւողութիւնը բաւական տարբերուում են բելգիական միւս քաղաքներում տեսածից: Այս քաղաքում, ինչպէս և Բելգիայի այս մասում հոլանդական կեանքը մեծ ազդեցութիւն ունի:

### Հ ո լ լ ա ն դ ի ա յ ու մ .

Առաջուց վճռած լինելով՝ Բելգիայով չը բաւականանալ, այլ Հոլլանդիա եւ անցնել ու հոլլանդացուն իւր հայրենիքում ճանաչել, եւ շարունակում եւմ ճանապարհս գէպի Հոլլանդիա: Գնում եւմ մի աշխարհ, որը, ուսանելի և խրատական շատ բան է պարունակում իւր մէջ: Բելգիան հետաքրքրութիւն է դարձեցնում գլխաւորապէս իւր նոր ժամանակներում ձեռք բերած յառաջադիմութեամբ, իսկ Հոլլանդիան բոլորովին այլ հետաքրքրութիւն է շարժում: Ճիշտ է, այս երկու երկիրները երկար ժամանակ միացած են եղել, Նիդերլանդ ընդհանուր անունն են կրել, նոյն վիճակն են ունեցել, բայց քաղաքական ծանր վիճակից աւելի շատ Բելգիան է տուժել, քան Հոլլանդիան: Եղել են ժամանակներ, երբ Բելգիան հեծել է բռնակալութեան ծանր լծի տակ, մինչդեռ Հոլլանդիան միաժամանակ բաւական ազատ է եղել և կուլտուրայի, յառաջադիմութեան հետամուտ: Այդ լաւ նկատում ենք սղանական բռնակալութեան դէմ մղուած կռիւների ժամանակ: Մինչդեռ Հոլլանդիան մի կերպ ազատուած բռնակալական լծից՝ խաղաղ ծաղկում էր և Ամստերդամն ու այլ քաղաքները համաշխարհային նշանակութիւն էին ստանում, Բելգիան հեծում էր սղանական աւերիչ տիրապետութեան տակ: Անտիերպէն և Բրիւսէլ այրում, կործանում էին Սակայն այսօր պատկերը փոխուել է: Բելգիան՝ չնորհիւ իւր ձեռք բերած ազատութեան, բնական յարմարութիւնների, հարուստ հանքերի, օրէցօր աւելլում եւ նշանակութիւն է ստանում, մեծ հետաքրքրութիւն է շարժում, իսկ Հոլլանդիան կարծէք թէ աստիճանաբար գէպի յետ է գնում, կորցնում է իւր նախկին փառքը, նշանակութիւնը: Եւ այդպէս էլ պիտի լինի, քանի որ ներկայումս միայն աշխատանքով, քրտինքով ամեն ինչի չի կարելի հասնել, մրցել, երբ երկիրը չափազանց աղքատ է, մանաւանդ հանքերով: Այո, Հոլլանդիայի պէս մի երկիր, որ դուրկ է բնութեան առուելութիւններից, հարստութիւններից, միայն քրտինքով աշխատանքով չի կարող առաջ գնալ: Երկայումս երկրների յառաջադիմութեան ամենաառաջին պայմաններից մէկը հարուստ հանքեր ունենալն է, որից, դժբախտաբար, դուրկ է Հոլլանդիան: Հոլլանդիայի յոյսերը կազմում էին իւր գաղութներն ու ծովային առևտուրը, բայց զրանք էլ հետզհետէ անցնում են Անգլիային և Գերմանական պետութեան:

Հոլլանդիայի համաշխարհային առևտուրի գաշտից քաշուելուն, իւր նախկին փառքից զրկուելուն բաւական նպաստել է և

նրա կառավարչական ձեռի փոփոխումը—հասարակապետութիւնից՝ միապետութեան անցնելը: Այս հանդամանքը խիստ զգայի է թէ արտաքին յարաբերութիւնների և թէ ներքին կեանքի վերաբերմամբ: Կառավարչական ձեռի փոփոխութիւնը հոլլանդական կեանքի վրայ խոշոր ազդեցութիւն է թողել և այն էլ մեծ մասամբ բացասական:

Այս դարնան սկզբներին Ֆինլանդիա ճանապարհորդութեան էին դնացել Պետերբուրգի գիւղատնտեսական գաղթի մի խումբ աշակերտներ: Ֆինլանդացիք նրանց ընդունելով և նկատելով իրենց երկրի այս ճանապարհորդներին պատճառած հիացմունքը, զարմանքը, միշտ և ամեն տեղ պնդում էին, որ զարմանալու ոչինչ չկայ, այս ամեն հրաշալիքները, բարիքները աղքատ Ֆինլանդիայի զաւակը ձեռք է բերել՝ չնորհիւ իւր արդար իրաւունքների: Երբ պնդում էին, որ չնորհիւ կառավարչական ձեռի, խելօք օրէնքների են այս ամենը ձեռք բերուել, և եթէ իրենցից խլուեն այդ օրէնքները, այն ժամանակ Ֆինլանդիան կը կորցնի այս ամենը: Եւ զրա համար է, որ իրենք այդպիսի յամառ կերպով պաշտպանում են իրենց իրաւունքները: Ֆինլանդացիների պնդածը իւր մէջ որոշ ճշմարտութիւն է պարունակում: Հոլլանդիայի հետ պատահածը հաստատում է այդ: Հոլլանդիան էլ մի ժամանակ օգտակար իրաւունքներ, ազատ կառավարչական ձեռնէր, ամենքը մտածում էին ընդհանրութեան շահի մասին, առաջ էին տանում այնպիսի հակոյական ձեռնարկութիւններ (ինչպէս են ջրի գէլ կուտելու միջոցները, ջրի աակից հող ձեռք բերելը և այլն), որոնք այժմ գժուար թէ հնարաւոր լինեն:

Եւ Հոլլանդիան չնորհիւ իւր կառավարչական ձեռի մեծ դեր էր խաղում աշխարհում ու մի ժամանակ միակն էր: Բայց կորցնելով իւր կառավարչական ձեռ, օրէնքները, նա խիստ կերպով առւժում է թէ ներքուստ և թէ արտաքուստ: Եւ այստեղ չեմ մտանում և ուրիշ հանդամանքներ, որոնք Հոլլանդիայի փառքի նսեմացման նպաստել են, ինչպէս են՝ Մեծ-Բրիտանիայի և Գերմանական պետութեան զարգանալը, Հոլլանդիայի բնական աղքատութիւնն և այլն: Այո, սրանք էլ որոշ դեր են խաղացել, բայց անկասկած է այն, որ Հոլլանդիայի զարգացման խնդրում խոշոր մասնակցութիւն է ունեցել կառավարչական ձեռ և նրա վերացմամբ Հոլլանդիան խիստ առւժել է:

Մուտք գործելով Հոլլանդիա եւ աւելի օգետուած՝ հետաքրքրում եւմ նրա փառաւոր անցեալով: Հոլլանդիայի հին անցեալն ու ներկան այնքան չեն հետաքրքրում ինձ, որքան նրա գարգայման այն փառաւոր, անդամալի չրջանն, երբ մի ժամանակ Արտոգայում միակն էր իւր առևտուրով, գիտութեամբ, գեղար-

ուեստով: Ինձ հետաքրքրում է Հոլլանդիայի պատմութեան այն շրջանն, որը սկսում է սպանիական կոիւններից և տևում է մինչև Անգլիայի հետ ունեցած ընդհարումները:

Հոլլանդիայի փառքի շրջանը սկսում է այն օրուանից, երբ համբերատար ու աշխատասէր հոլանդական ժողովուրդն անկարող լինելով տանել սպանական աւերիչ, ծանր լուծը, մանաւանդ Փիլիպպ I-ի գործ գրած մտաւոր, տնտեսական, քաղաքական ճշնշումները, ինկւիզիցիայի ներմուծումը, ոտքի է կանգնում և Ուտրեխտի դաշինքով կազմում իւր սեփական կառավարութիւնը (1579): Այդ օրուանից, ազատ սպանական լուծից, թէ՛ շարունակ խառնակութիւնների մէջ, չնորհիւ իւր կառավարչական ձևի Հոլլանդիան հետզհետէ մեծ նշանակութիւն է ստանում և աշխարհում պատուաւոր տեղ գրաւում: Նա չուսով դառնում է գիտութեան, գեղարուեստի, աւետրի կենտրոն: Այստեղ են ժողովուրդը բանակալու իւր ձևերը, աշխատասէր բանւորները, արհեստաւորները: Հոլլանդական ժողովուրդը միացած դրսից եկած օգտակար ուժերի հետ Հոլլանդիան ծաղկեցնում է: Չբաւականանալով Հոլլանդիայով, հոլլանդական աւետուրը պահանջ է զգում արտաքին շուկաների և ահա առաջ են գալիս խոշոր յարարութիւններ մի շարք երկրների հետ, դրանց մէջ և Ճապոնիա ու Չինաստան: Աւետրի հետ միասին առաջ է տարւում գաղութներ հիմնելու և նոր երկրներ գրաւելու քաղաքականութիւնն, որը մեծ յաջողութիւններ է գտնում: Կարճ ժամանակում Հոլլանդիայի ձեռքն են ընկնում մի քանի յայտնի և հարուստ երկրներ, որոնց գրաւելու մէջ խոշոր մասնակցութիւն է ցոյց տուել արեւելեան Հնդկաստանի աւետրական ընկերութիւնը (հիմնուած է 1602 թուականին):

Բայց Հոլլանդիան երկար չի կարողանում մնալ այս վիճակում: Հարեան ազգերն, որոնք նախանձով ու ատելութեամբ լքուած էին դէպի այս փոքրիկ, բայց ուժեղ հասարակապետութիւնը, շարունակ առիթ էին որոնում նրան մի կերպ վիսակելու: Առիթը չուսով հասնում է, և փոքրիկ հասարակապետութիւնն ընդհարւում է թարմ ու ուժեղ Անգլիայի հետ, որից մեծ պարտութիւն է կրում: Այդ օրուանից սկսած Հոլլանդիան հետզհետէ կորցնում է իւր համաշխարհային նշանակութիւնը, և նրա փառքը նսեմանում է: Նապոլէոնեան կոիւններն աւելի մեծ վնասներ են հասցնում նրան և պատճառ դառնում մի քանի գաղութների ձեռքից տալուն, դեռ մի կողմ թողած ծովային առետուրին հասած վնասները: Նորից վերազանդանալուց Հոլլանդական պետութիւնը, բայց միացած Բելգիայի հետ, այնքան էլ օգուտներ չի բերում երկրին: Բելգիայից անջատուելով, նա աւելի ու աւելի կորցնում է իւր նշանակութիւնը:

և կարելի է ասել, որ այսօր 17 և 18 դարերի Հոլլանդիայից մեծ քան չի մնացել:

Բացի իւր փառաւոր անցեալից, Հոլլանդիան ինձ հետաքրքրում է և իւր բնութեան դէմ դարերի ընթացքում մղած կոիւններով: Նա այդ կոիւնները, բնութեան աւերիչ գործի դէմ ստեղծած միջոցները կազմում են Հոլլանդիայի ամենամեծ գործերից մէկը: Ուրիշ երկրներում ճանապարհորդում են մեծ մասամբ բնութեան գեղեցիկ տեսարաններով հիանալու, իսկ Հոլլանդիայում ընդհակառակը մարդու՝ բնութեան դէմ մղած կռուի արդիւնքը դիտելու: Հոլլանդիան բնութեամբ ամենադժբաւ երկրներից մէկն է: Ահա ինչ է ասում հոլլանդական բանաստեղծներից մէկը. «բնութիւնը մեզ համար ոչինչ չի արել, իւր բարիքները մեզինից հեռու է պահել, և այն ամենն ինչ որ մեր երկրում տեսնում էք, արդիւնք է աշխատանքի, ժրջանութեան և ինքուստրիայի»: Եւ որքան ճիշտ են այս խօսքերն: Ուրիշ երկրներում բնութիւնը մեծապէս աջակցում է մարդուն, նպաստում քաղաքակրթութեան, իսկ այստեղ քրտնաջան, համբերող, տոկուն հոլլանդացին է ամեն ինչ ստեղծել, երկիրը բերրի դարձրել:

Հոլլանդիայի ամենամեծ գժբախտութիւնը կայանում է նրանում, որ նրա հողը բաւական անբերրի է, բաղկացած է աւազից, տորֆից, և որ ամենազխաւորն է, ծովի մակերևոյթից ցածր է (մինչև 5 մետր): Երկրի ծովի մակերևոյթից ցածր լինելը և մըշտական մառախուղը դարեր շարունակ խանգարել են Հոլլանդիայի բարգաւաճումը, և հոլլանդացին մեծ աշխատանք, հսկայական ջանքեր է գործադրել դրանց վնասակար ազդեցութիւնից ազատուելու համար: Գիտութիւնն ապացուցել է, որ ծովի աստիճանաբար կլանում է Հոլլանդիայի ցամաքն, ափերը, թէ՛ և այդ կենդանի սերնդին նկատելի չէ: Ծովի այդ աւերիչ գործի մէջ կարելի է համոզուել, եթէ դիտենք շատ կարճ ժամանակում ծովի դէմ կառուցած պատնէշներն, որոնք արդէն խորասուզուելու վրայ են: Ծովը դարեր շարունակ հոլլանդացիներին իրենց երկրում խանգարել, յաճախ չարիք է հանդիսացել: Պատմութիւնից յայտնի է, որ նա շարունակ հեղեղել է Հոլլանդիան աւերելով, ջրի տակ առնելով երկրի զանազան մասերն: Այդ տեսակ ջրհեղեղներից են առաջացել օրինակ 12 և 13 դարերում մի շարք լճեր, ինչպէս են «Zuidersee», (Հիւսիսային ծովի մի ծովախորշը), «Dollart», «Biesbosch» և այլն: Բայց ծովից, երկիրը հեղեղում են և գետերն, որոնք երկրի ծովի մակերևոյթից ցածր լինելու պատճառով, ազատ հոսել չեն կարողանում: Այսպէս Հոլլանդիան իւր շատ բազումներով մասնելով Հոլլանդիա՝ կորցնում է իւր ոյժն, առատութիւնն իջնում է, և այնքան է ուժասպառ լինում, որ անկարող է լինում ցրեհի հատիկները



քակական շինութիւններ, թանգարաններ: Բաւական հետաքրքիր է նրա գլխաւոր եկեղեցին (Groote Kerk), որը կառուցուած է 15-րդ դարում: Յայտնի է իւր օրգելով, որը բաղկացած է 50000 չւեխներից: Հետաքրքիր է նոյնպէս և «Museum Boymans» կոչուած թանգարանն, ուր զետեղուած են նկարներ, որոնք բանում են 7-8 դարից: Մեծ մասամբ հոլանդական դպրոցի նկարներ են:

Ռօտտերդամից կէս ժամուայ ճանապարհ հեռու գտնուած է Հաագա քաղաքը: Ծանապարհն անցնում է Հոլլանդիայի այն մասով, որը յայտնի է և շատ հարուստ անվերջ արօտատեղիներով: Այլ ու ձախ, ճանապարհի ամբողջ երկարութեամբ մինչև հորիզոնն տարածուած են արօտատեղիներն, որոնց վրայով ամեն ուղղութեամբ հոսում են բազմաթիւ առուներ, ջրանցքներ: Այդ ջրանցքներին մի տեսակ գեղեցկութիւն են տալիս եզերքներին կառուցած քամու ջրաղացներն, որոնք ջուրն առաջ են շարժում, հոսեցնում են: Արօտատեղիներում արածում է հոլլանդական նախիրն, որն աչքի է ընկնում իւր աննման կովերով, որոնք ձիաների պէս ջուրած են: Անցնելով Դելֆ և Ռիզվիկ քաղաքներով, գնացքը քիչ յետոյ մտնում է Հաագան:

Հաագայի մասին ես մեծ կարծիք ունէի: Երևակայում էի որպէս մի շատ գեղեցիկ, ճոխ քաղաք: Ես հիմք ունէի այն, որ Հաագան թագաւորանիստ քաղաք է, այնտեղ են գտնուում Հոլլանդիայի կառավարչական բարձր ատեաններն և բացի այս. պատմութիւնից գիտէի, որ Հաագային առանձին շուք է տուել, դարտարել է Լիւզվիկ Բօնապարտը, Հոլլանդիայի թագաւորը: Բայց մտնելով քաղաք և շրջապահիով, զգացի որ բաւական սխալուած մե. նա այնքան էլ գեղեցիկ, փարթամ չէ, որչափ ես էի երևակայում: Ասենք Հաագան գեղեցիկ կարելի է համարել. միայն ճոխութեան, փարթամութեան կողմից բաւական յետ է:

Հաագայի կենդրոնն է կազմում «Plein» կոչուող հրապարակն: Այստեղ են գտնուում բոլոր յայտնի պետական շինութիւններն (արգարադատութեան պալատը, դադութների և զինւորական նախարարութիւնները շինութիւնները և մի շարք յայտնի հաստատութիւններ ու արձաններ): Հրապարակի արեւմտեան կողմում գտնուում է Հաագայի նկարների աշխարհահռչակ թանգարանը (Museum konik lijk Kabinet Van Schilderijen)՝ Այս փոքրիկ թանգարանը շատ յայտնի նկարներ է պարունակում իւր մէջ: Միջին նկարները պատկանում են մեծ մասամբ հոլանդական դպրոցին, կան և ֆլամանդական գերմանական, ֆրանսիական, իտալական նկարներ: Այստեղ են գտնուում Ռեմբրանտի, Վան-դելի, Թորթանի, Ռուբենսի նկարներից շատերը: Թանգարանի գտնվել է կազմում Ռեմբրանտի «Անատոմիայի

դաս» կոչուող նկարը: Ես գեղեցիկ է և Պաւլուս Բօտտերի «Ձահեկ Յուլը» կոչուող նկարն, որը Հոլլանդիայում ամենաժողովրդականացած նկարն է: Թանգարանը շատ աչքի է ընկնում մարդկային նկարներով, մանաւանդ Վան-դելի վրձինն պատկանողներով:

Թանգարանից քիչ հեռու գտնուում են հոլլանդական բոլոր նախարարութիւնները: Շինութիւններն աղիւսից են և խղճալի տպաւորութիւն են թողնում: Այս բացատրում է նրանով, որ նախ՝ քարն է պաղատում, երկրորդ՝ հողը պինդ չէ, թոյլ չէ տալիս մեծ ու փառահեղ շինութիւններ կառուցանել:

Թէ չէ, հոլլանդացին անձաշակ չէ: Հաագայի տներն անհամեմատ փոքր են, աղիւսից շինած և ցածր: Տներին առանձին գեղեցկութիւն է տալիս այն հանգամանքն, որ տներն իրար հաւասար մեծութիւն ու բարձրութիւն ունեն և տանիքներն էլ իրար հետ միացած են, մի ընդհանուր տանիք են կազմում:

Բաւական գեղեցիկ են Հաագայի ծառայատ ուղիղ փողոցներն և «Willemspark» հրաշալի զբօսատեղին:

Հաագայից 4—5 վերստ հեռու գտնուում է Շելենինգէն յայտնի կուրօրտը: Սա ընկնում է Հիւսիսային ծովի ափին և շատ յայտնի է որպէս ծովային բաղնիք: Մե քանի բույէներէց յետոյ ելէքարաքարը հասցնում է այդտեղ: Հաագայից քիչ հեռացած՝ բնութիւնը փոխում է և զգալի է դառնում մի աներեւոյթ ոյժի շրջապայքի վրայ գործող ազդեցութիւնը: Խաղաղ քաղաքից մարդ յանկարծ ընկնում է մի վայր, ուր քամին ուժգնօրէն փչում է, օդը սառն է և լի անարկու գոռում գոչիւնով: Հեռուից ոպետակին են տալիս շատ բարձրութիւններ, նման զինւորական վրաններէ: Որքան մօտենում ենք վրաններ, դուռում-գոռումներն սաստկանում են: Քիչ անցած երեւում է Շելենինգէն զիւղը, իսկ յետոյ էլ անարկու, անծայր Հիւսիսային ծովը . . . . .

Մեծ է այս ծովի գործած տպաւորութիւնը: Անանքիս մէջ առաջին անգամն եմ այսպէս անծայր, անարկու ծով տեսնում: Նայում եմ ծովին, անվերջ, անգաղար և չեմ յագենում: Երեկոյեան դէմ է. վերջալոյս է: Մարդ արեւի ճառագայթներն լեռնացած, անարկու ալիքներին կրակի փայլ են տալիս, որոնք՝ որպէս կրակի լալիկներ, ճգնում են մօտենալ ափին, ոչնչացնել արգելք հանդիսացող պատնէշներն ու կլանել մարդկային տկար բազուկների արդիւնքը:

Ափում մենակ եմ. նաւերը անգամ չեն երևում: Ինձնից քիչ հեռու, ափին մօտ երևում են փորքիկ շարածճի երեխաներ, որոնք խաղում են ծեր, բայց դաժան տառի-ծովի հետ: Նրբ ալիքները դէպի ներս են քաշում, փորքիկները կանգնում են ջրից ազատուած աւազի վրայ և կարծէք թէ ծաղրում են ծովին: Բայց տհարիւր ալիքներն արագութեամբ և զօրեղ թափով նորից հեղեղում են ափը՝ փակցնելով փորքիկներին: Ես զարմանում էի, թէ ինչպէս այս երեխաները վախ չեն գրում և խաղում են մի վտանգաւոր ոյժի հետ, որն ո՞վ գիտէ քանի քանի այդպիսի շարածճիկներն իւր ծոցն է առել:

Յովի մէջ, ափից բաւական հեռու ջրն վրայ կառուցուած է մի հոյակապ, դեղեցիկ պաւերլիօն: Այստեղից շատ լաւ կարելի է դիտել ծովը. մանաւանդ նրա տհարիւր ալիքներն, որոնք այստեղ աւելի ուժեղ, ջրաշատ են քան ափում: Զրային մատերն երբեմն ի մի խմբուելով կազմում են վիթխարի, լեռնանման ալիքներ, որոնք ջրվէժներն պէս թափուելով կրենց հետ միացնում են էլ անհամար ալիքներ ու հսկայական ոյժով գրոհ տալիս, զարկում ամուր պատնէշներին: Բայց մեծ դիմադրութեան հանդիպելով՝ ծովի խորն են քաշում և նորից աւելի հզօր թափով առաջ նետուում: Նրկաթեայ ամուր ձուղերի վրայ ամրացած պաւերլիօնն ալիքների ձեռքին կարծէք թէ մի թիթեղ լինի: Նա շարունակ օրօրում է, ալիքները նրան դադար չեն տալիս: Նրբեմն ալիքներից կաղմուած տհարիւր ջրվէժներն այնպիսի ուժգնութեամբ են շարժում այս շինութիւնը, որ պահ մի թւում է, թէ պէտք է ամեն ինչ խեղցն կործանուի, խորապիսի . . . բայց խորամանկ մարդը շատ վարպետ կերպով է կառուցել. ալիքները դեռ անզօր են նրան տապալել: Յովն անծայր է, ոչինչ չի երևում. միայն ափի երկարութեամբ դէպի հեռուն տարածուած են վրանանման անթիւ բարձրութիւններ, որոնք ծովի դէմ կառուցուած բնական և արհեստական պատնէշներ են:

Առանձնապէս այստեղ՝ Նեվեի լիւզի մօտ հիւսիսային ծովը բաւական անհանդիստ, անողորմ է: Ափին գտնուող փորքիկ ձկնորսական գիւղը շատ ու շատ անգամ է ենթարկուել ծովի աւերիչ արշաւանքներին, ջրհեղեղներին: Գեռ չեն անհետացել ծովի 1894 թուականին այս գիւղին պատճառած աւերմունքի հետքերը: Գիւղի փորքիկ եկեղեցում և Հաադայի քաղաքային խորհրդարանում գտնուող երկու նկար ցոյց են տալիս գիւղի նախկին պատկերը, նախ քան կատառոտօփան: Համեմատելով այդ գիւղի ներկայ տեսքի հետ, պարզ նկատուած էր, թէ ինչ չարիք է գործել ծովը: Եւ այդ տեսակ գիւղեր, քաղաքներ

Հոլլանդիայի շատ կան:

Յովի ափը շատ դեղեցիկ է և խնամքով է պահուում: Ափի երկարութեամբ ընկնում են մի շարք դեղեցիկ շինութիւններ, մեծ մատամբ հիւրանոցներ, հեռուում երևում է Փարոսը, որ սեղից աւելի լաւ կարելի է դիտել անծայր, անհանդիստ ծովը:

Նեղուելով ցրտից և քամուց, ես թողնում եմ ծովը, թէև ոչ յադեցած նրա սերուն տեսքից, անհանդիստ, ջրաշատ ալիքներից: Նորից Հաադա եմ վերադառնում, բայց այս անգամ ոտով: Ճանապարհն անցնում է անտառով, որը բաւական հին է: Այս հինաւուրց, կուսական անտառը գիշեր ժամանակ, լուսնի շողերի տակ՝ անցորդի վրայ անմուսնալի, մանակ, լուսնի շողերի տակ է թողնում: Այստեղ բնութեան խորհրդաւոր ապաւորութիւն է թողնում: Այստեղ բնութեան կախարհական վայրում, հեռու շատ հեռու աղմկալից քաղաքի անհանդիստ կեանքից: Ամեն ինչ լուռ է. ամեն ուրեք տիւրում է հանդուսութիւն, խաղաղութիւն: Այդ անդորութիւնն երբեմնակի խանգարում են երթեկող ելէքորաքարշերն, որոնք յիշեցնում են մօտիկում գտնուող աղմկալից քաղաքի մասին: Անտառի ծայրում, Հաադայի կպած երևում է «Willemspark» մեծ զբօսատեղին, ուր կանգնեցրուած է Հոլլանդիայի ազգային արձանը՝ 1813 թուականին նորից ձեռք բերուած անկախութեան յիշատակին:

Հաադայից դէպի Ամստերդամ ճանապարհը սկսում է աւելի հետաքրքիր դառնալ: Այս ճանապարհի ընթացքում աւելի ուրայն դոյնով, ամբողջութեամբ պատկերանում է Հոլլանդիան աշխատասէր, քրանաջան հոլլանդացու ուսանելի հայրենիքը:

Աջ ու ձախ տարածուած են դաշտեր, անհամար այս ու այն ուղղութեամբ հոսող, իրար խաղող ջրանցքներ: Մարդ ապշում է, թէ որպիսի համբերութեամբ, տոկունութեամբ այս ժողովուրդն այսչափ ջրանցքներ է փորել: Առունների, ջրանցքների ջուրը չի հոսում, այլ ափից դուրս է գալիս և ջրանցքներն ջուրը չի հոսում, այլ ափից դուրս է գալիս և Հոլլանդացու միակ ապաւէնը քամու ջրաղացն է, որի օգնութեամբ, ինչպէս ինքն է ասում, «Ջուր է աղում», այսինքն ջրին ստիպում է հոսել: Արտեր չեն երևում. մեծ մասամբ արօտատեղիներ են: Ըստ երևոյթին այս երկրում անասնաբուծութիւնը աւելի առաջ պիտի դնացած լինի, քան երկրաբուծութիւնը: Երկաթուղու գծի երկու կողմովն էլ ընկնում են հոլլանդական փորքիկ, բայց գողարկի գիւղերն: Սրանք են հոլլանդական փորքիկ, բայց գողարկի գիւղերն: Սրանք են հոլլանդական փորքիկ, բայց գողարկի գիւղերն: Սրանք են հոլլանդական փորքիկ, բայց գողարկի գիւղերն:



ներ առաջանալով, նա շատ քան է կորցնում: Նրա առևտրին մեծապէս վնասում են ֆրանսիական պատերազմները: Ներկայումս Անտերբախը թէպէտ դարձեալ աչքի է ընկնում, բայց նախկինը չէ: Այսօր նա մեծ կոպեր ունի դաղութների հետ. սակայն օրէցօր յետ է գնում, շնորհիւ Ռոտտերդամի, Անդլիպի և Պերմանիայի մրցման:

Քաղաքը կենտրոնն ունի: Բաղմութիւն փողոցներով անցնող ջրանցքները Վենետիկն են յիշեցնում, միայն այն տարբերութեամբ, որ այստեղ ջրանցքներով մարդկանց երթեկուղիներն չեն լինում, այլ իրեր են փոխադրում: Բաւական մեծ ու գեղեցիկ են «Herren» «Keizer», «Prinzen» կոչուող ջրբանջքները: Շատ գեղեցիկ է և քաղաքի միջով հոսող Ամստել գետը: Տներն այնքան գեղեցիկ չեն. մեծ մասամբ ցած են և միապաղաղ աղիւսից: Շատ մասերում քաղաքը պահել է իւր հին տեսքը: Ինչպէս օրինակ նեղիկ և ցածրիկ պատուհաններ, դէպի փողոց բացուող դռներ, որոնք ուսական աւանն են յիշեցնում: Քաղաքի ամենակենդանի մասն են կազմում «Dams-straat», «Kalverstraat», «Paleistraat», «Nieuwendyk», «Amstelstraat» փողոցները, որտեղ դանւում են յայտնի խանութները, հիւրանոցները և այլն: Այստեղ տիրում է այնպիսի ճոխութիւն, փարթամութիւն, սրից մի Ռոտտերդամ, Բրիւսսէլ շատ յետ են մնում: Սակայն այս ճոխութեան, փարթամութեան հետ միասին Ամստերդամը դարձեալ գեղեցիկ չէ: Նրա գեղեցիկութեան խանգարում են տգեղ, իրար կպած տները, ծուռ ու մուռ նեղ փողոցներն և որ գլխաւորն է կեղտոտութիւնը: Թէ փողոցներն որքան կեղտոտ են, նկարագրել չի լինի: Պերմանիայի ամենահասարակ քաղաքն աւելի մաքուր է, քան Հոլլանդիայի մայրաքաղաքը: Կեղտոտութեան հետ ձեռք-ձեռքի տուած առաջ է գնում և գողութիւնն, որն այստեղ ամենամեծ կատարելութեան է հասած, քան այլ մնացած ճոխային քաղաքներում: Ամստերդամը գրպանահասաններին, խաբէբաններին որջ է: Նւրբացում աւազակութիւնը, գողութիւնը իւր կոպիտ ձևերը, միջոցները վաղուց թողել է և քաղաքակրթուել է, նորը ձևեր ստացել: Քաղաքակրթուած գողութեան ամենանորը տեսակներից են գրպանահատութիւնը, խաբէբայութիւնը: Թէ սրպիսի հմտութեամբ է այդ առաջ տարւում, միայն ապշել կարելի է: Մանաւանդ այս քաղաքում այդ արհեստը խիստ զարգացած է: Մի կէս ժամ չէր անցել, ինչ էս քաղաք էի մտել, երբ վրաս դգացի այդ արհեստի ոյժը: Մի քանի բոպէի մէջ, դեռ մինչև այժմ էլ ինձ անհատկանալի կերպով, ինձ թալանեցին, և ես մնացի առանց ձանապարհա-

ճախքի, առանց որ և է միջոցի այս օտար քաղաքում: Թէ ինչպէս ինձ թալանեցին, այդ մինչև օրս էլ ինձ համար հանելուկ է: Շատերը կարող են կարծել, թէ այս արհեստով պարպողները հոլլադացիներ են: Բնաւ ոչ: Հոլլանդացին մաքուր է. աշխատանքը նրա համար սուրբ է: Խաբէբայութեամբ, գրպանահատութեամբ զբաղւում են օտարները, մանաւանդ գերմանացիք:

Նրը ես ոտտիկանատուն էի գնացել, պատմելու գլուխս եկածը և կարծիք յայտնեցի, որ հոլլադացիներ պէտք է լինեն ինձ թալանողները, այնտեղ վերաորուեցին, պնդելով, որ հոլլանդացիք այդպիսի անպատիւ գործով չեն պարսպում, այդ անպայման գերմանացիներին գործ է, որոնց թիւն այստեղ հազարներ է հասնում: Այդ նոյնը հաստատեց և մի խեղճ գերմանացի, որը նոյն օրն իւր հայրանակիցներին ձանկն էր ընկել և փառաւորապէս թալանուել: Կորցնելով մօտս եղած փողն, ես ստիպուած եղայ Ամստերդամում երկար մնալ և սպասել, մինչև որ ընկերս Կայպիգից փող կուղարկէր: Թէև մի կողմից խիստ պայքացել էի խաբէբայ գերմանացիներին վրայ, որոնց հայրենակիցները մի առանձին հաճոյքով հայերն խաբէբայ, հրեայ ու հոգար ու մի բացասական տխաղտներ են շուրջը, միւս կողմից ես նրանցից շնորհակալ էի, նախ՝ փորձուելով և երկրորդ՝ երկար մնալով Ամստերդամում, ես քաղաքի հետ աւելի լաւ ծանօթացայ:

Ամստերդամի ամենաառաջին և մեծ, հետաքրքիր շինութիւնը, նրա փառքը, պարծանքն է «Rijks—Museum» թանգարանն, որն ամբողջ նիզերլանդն է իւր մէջ պարունակում: Այստեղ է կենտրոնացած նեզերլանդի կուլտուրան իւր բոլոր արտայայտութիւններով: Եւ եթէ մի օր Հոլլանդիա ու Բելարտայայտութիւններով: Եւ միայն այս թանգարանը գլխաւորապէս անհետանան, և միայն այս թանգարանը մնայ, այս միայն բաւական է աշխարհին ցոյց տալու այդ երմնայ, այս միայն բաւական է աշխարհին ցոյց տալու այդ երմնայ, այս միայն բաւական է աշխարհին ցոյց տալու այդ երմնայ: Թանգարանը թիւնները, նրանց կուլտուրական ատտիճանը: Թանգարանը Հոլլանդիայի ամենավիթխարի շինութիւններից մէկն է. կառուցուած է կարմիր աղիւսից հոլլանդական վերածնութեան ուրցուած է կարմիր աղիւսից հոլլանդական վերածնութեան ոճով: Շինութիւնը 135 մետր երկար է և 71 մետր խոր. իւր մէջ պարունակում է 330 սենեակ և բռնում է մօտ 11000 քառակուսի մետր տարածութիւն: Ունի և մի գեղեցիկ այդի քառակուսի մետր տարածութիւն: Շինութիւնն արտաքուստ չորս կողմից զարգարուած է խորհրդաւոր նշաններով և պատկերներով: Թանգարանի առաջին յարկում գտնուում են գրադարան, մետաղեայ դանազան անօթներ, տան հին կահ-գրադարան,

կարասիներ, տարազի, եկեղեցական, ճարտարապետութեան, գեղարուեստական իրերի բազմազան ժողովածուներ: Երկրորդ յարկում գետեղուած են մեծ մասամբ նկարներ: Երկրորդ յարկը մանուկ են «պատուի սրահով», որն անմասն է թէ իւր զարդարանքներով և թէ նկարներով: «Պատուի սրահ» աջ կողմը գտնուում է Ռեմբրանդի դահլիճը: Գրան հետևում են նը- կարչական զանազան բաժանմունքներ ժամանակագրական կար- դով: Ինչպէս Անտվերպէնի թանգարանի զարդը Ռուբէնսն է, այտեղ էլ թանգարանի պարծանքը Ռեմբրանդն է իւր «Գան- ձապահ» և «Գիշերապահ» նկարներով մանաւանդ, որոնք նրա գլուխ դործոցն են համարուում: Նկարներով թանգարանը շատ հարուստ է և կարող է աշխարհիս ամենայայտնի նկարչական թանգարանների հետ մրցել:

Ամստերդամի գլխաւոր շինութիւնները գտնուում են «Dam» կոչուող հրապարակի վրայ: Այտեղ է արքայական պա- լատն, որը սկզբում ծառայել է որպէս քաղաքային խորհրդա- րան: Պալատն ամենահետաքրքիր և աչքի ընկնող շինութիւն- ներից մէկն է: Տեսնելու և ուշադրութեան արժանի է նրա աշտարակն, որտեղից երևում են Հարլէմ, Ուտրեխտ քաղաք- ներն և ծովախորշը: Պալատին մօտ է գլխաւոր փոստատունը, մի վերին ստանձանի հետաքրքիր շինութիւն: Շատ գեղեցիկ է ու հիացմունք է շարժում և քաղաքային բօրսան, որը մի ահարկու շինութիւն է: Եկեղեցիներով ևս Ամստերդամը շատ հարուստ է: Նշանաւորներն են: «Oude Kerk» և «Nieuve Kerk»: Այտեղ պէտք է լինի և մի հայկական եկեղեցի, որին շատ պարեցի, բայց չգտայ: Հրապարակի վրայ բացւում են քաղա- քի ամենայայտնի փողոցներն, ուր գտնուում են յայտնի հիւ- բանոցներն և հաստատութիւններն: Այտեղ միայն կարելի է քաղաքի ճոխութեան, կենդանութեան մասին գաղափար կող- մել, որն ոչնչով յետ չի մնում Գերմանիայի Բերլինից:

Ամստերդամի մօտերը գտնուում է «Zaandam» փոքրիկ վայրն, ուր մինչև օրս էլ մնում է Պետրոս Մեծի առունը (Lo- gement Zum Czar Peter): Ասում են այս խրճիթը կառուցել է ինքը՝ Պետրոս Մեծը (1697): Այս քաղաքացած է երկու սենեա- կից մէջը կան մի մահճակալ և մի շորի պահարան: Այտեղ Պետրոս Մեծը զբաղուելիս է եղել նաւաշինութեամբ, և նե- ղուելով հետաքրքրուող այցելուների բազմութիւնից՝ ութ օրից յետոյ թողել է այտեղն և անցել Ամստերդամ, որ գոնէ այնտեղ ազատ ու հանգիստ աշխատել կարողանայ:

Ամստերդամը Հոլլանդիայում կատարած ճանապարհոր- ղութեանս վերջին կէտն է: Այտեղից սկսւում է վերագործս

դէպի Գերմանիա: Հոլլանդիայի գլխաւոր մասը համարեա թէ տեսել եմ. մնացածն, որ ընկած է ճանապարհիս վրայ, կա- րելի է Գերմանիայի շարունակութիւնը համարել:


Ամստերդամից դէպի Ուտրեխտ ճանապարհն անցնում է ջրանցքներով հարուստ դաշակով: Անթիւ են այդ ջրանցք- ներն, որոնք մի գիտէ որքան աշխատանք, քրակնք են պատ- ճառել: Ուտրեխտը փոքրիկ քաղաք է և յայտնի 1579-ին այս- տեղ կնքուած 7 նահանգները միութեան դաշինքով: Ուտ- րեխտի մօտ Հռենոսն երկու բազիլի է բաժանուում, որոնցից մէկը դէպի հիւսիսային ծովն է դնում, միւսը դէպի «Zuid- see» ծովախորշը: Ուտրեխտից ճանապարհը հետզհետէ հեռա- քրքրի է դառնում. երևում են փոքրիկ բարձրութիւններ, անտառներ, վարելահողեր: Որքան մօտենում է էք Գերմանիային, նոյնքան անսարանները փոխւում են: Հեաղհետէ անհետա- նում են անթիւ քամու ջրաղացներն, արօտատեղիները, միա- պաղաղ ընութիւնը: Մանելով Գելդերլանդ նահանգը, ընու- թիւնն աւելի հեռաքրքրի է դառնում: Մեղուաբծութեամբ յայտնի Վիենենդաալ կայարանից քիչ հեռու գտնուում է մի բլրակ, որն «Աուստերլիցի Պերեմեդա» է կոչուում, և կառու- ցուած է մարշալ Մարմոնտի հրամանով ի յիշատակ Նապո- լէոնի կայսր օծուելուն: Այտեղից սկիզբն է առնում մի ան- վերջ դաշտ ուր յաճախ կռուի են դուրս եկել հոլլանդական և ֆրանսիական բանակները: Քիչ անցած երևում է Արնհայմ քաղաքն: Այս քաղաքը Հոլլանդիայի քաղաքների մէջ ամենից բախտաւորն է այն կողմից, որ միակ քաղաքն է իւր ընական դեղեցիկ զիւրքով: Նրա պարծանքն են կազմում Վիլլովեան բարձրութիւններով, շատ գեղեցիկ շէջակայքն իւր այգիներ- րով, զբօսալայրերով:

Քաղաքը ընկնում է Հռենոսի ափին: Արնհայմն շուտով հետևում է պրուսսական սահմանագծի վրայ ընկնող Կամե- րիս մաքսատունն, որտեղից սկսւում է Գերմանեան:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

	Տող	Երես	Սխալ	Ուղիղ
Ներք.	7	10	պէտք է	չպէտք է
»	12	11	Մագգիբբուրդեան	Մագգիբուրդեան
վեր.	14	»	էլն	են
»	12	14	հարեանները	հարեաններս
Ներք.	5	»	բօնօպարա	բօնօպարա
վեր.	7	15	զրօսարաններ	զրօսարանները
Ներք.	12	16	մայր	մայրի
»	5	»	փառահեղ	փառահեղէ
վեր.	4	17	մայր	մայրի
»	»	»	ծանր	ծանրի
»	9	»	մայրերով	մայրիներով
Ներ.	2	»	ապի	ապիս
»	5	19	էր	է
վեր.	19	23	հակողներ	հակողները
Ներ.	9	»	թուրքը	մի թուրք
վեր.	6	26	23	231
»	5	29	կրթավայրեր	զրօսավայրեր
»	13	25	բաց է թողնուած «պալատը» բառը:	



Հյու  
52



Հայաստանի Ազգային գրադարան



NL0432100

21796